Ազգ

Azg
armenian daily

25 ՅՈՒԼԻՍ 2001 ՇՈՐԵՔՇԱԲԹԻ 138 (2342)

ԱԶԳԱՅԻՆ ԱՐՔԻՎ ՀԱՍՍՍՐ

Իրան-Ադրբեջան. Նոր միջադեպ, այս անգամ Կասպից ծովում

ԲԱՔՈՒ, 24 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հուլիսի 24-ին հայտնի դարձավ, որ Իրանի ՌՃՈՒ մի նավ ներխուժել է Ադրբեջանի տարածային ջրեր՝ Կասպից ծովի հարավում «Բրիբիհ փեթրոլեում»-ի համար նավթահանքերի հետազոտություններ կատարող ադրբեջանական նավին այդ հետազոտությունները դադարեցնել ստիպելու նպատակով: Իրանական նավից պահանջել են, որպեսզի «Գեոֆիզիկա-3» նավը մի քանի կիլոմետր հեռանա նավթային հանքավայրերից: «Իրանը լրջորեն խախտել է միջազգային նորմերը», այդ առնչությամբ հայտարարել է Ադրբեջանի վարչապետ Արթուր Ռասիզադեն: Միաժամանակ նա կոչ է արել Իրանին «դադարեցնել ագրեսիվ եւ անամոթ ակցիաները, որոնք ի զորու են լրջորեն բարդացնելու երկկողմ հարաբերությունները»: Նրա տվյալներով, կանխավ, հուլիսի 23-ին, «Գեոֆիզիկա-3» նավի եւ ուղեկցող «Ալիֆ Հաջիեւ» նավի գտնվելու ընթացքում երեւացել է իրանական ռազմական ինքնաթիռ: Բախվում Իրանի դեսպանատանը հրաժարվել են մեկնաբանել տեղի ունեցածը, հաղորդում է «Ֆրանսպրես» գործակալությունը:

ԳԻՏԱԺՈՂՈՎ

«Մենք տեղյակ էինք, բայց ոչ մասնակից»

ՀՀ արտգործնախարարը կարծում է, որ «Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի» շախողումը ցեղասպանության խնդրում առավել կարագացնի վերջինիս միջազգային վերջնական ճանաչումը

ԼԻԼԻԹ ԳԲԻԳՈԲՅԱՆ

«Հայոց ցեղասպանության խնդիրը համազգային բնույթ ունի, այնպես որ, չի կարող դառնալ որեւէ խմբի, կուսակցության, անգամ կառավարության մենաշնորհը», երեկ «Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովին» վերաբերող իր կազմակերպած գիտաժողովում նշեց Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Լավրենտի Բարսեղյանը: Վերջինիս՝ սույն հարցի շուրջ հայաստանյան քաղաքական կուսակցությունների, լրատվամիջոցների բացասական տեսակետներով հիմնավորված ելույթի ավարտից հետո գիտաժողովը վերածվեց առավելապես հարցուպատասխանի՝ հրավիրված պատմաբանների, քաղաքական գործիչների եւ ՀՀ արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանի միջեւ:

NT

Նախ պրն Օսկանյանը պնդեց, թե ՀՀ ԱԳՆ-ն, կառավարությունը, առհասարակ մեր պետությունը որեւէ մասնակցություն չունեն հուլիսի սկզբին Ժնեւում կազմակերպված վերոհիշյալ հանձնաժողովին: Բայց պրն Օսկանյանը նշեց, թե մեր արտաքին քաղաքականությունը որեւէ տարբերություն չի դնում հայ-թուրքական երկխոսությունների վրա: «Նախկինում մենք ունեցել ենք բազմաթիվ երկխոսություններ տարբեր մակարդակներով, այդ թվում պետական: Այնպես որ, երկխոսության խնդիրը մեզ համար ողջունելի է»:

Տես էջ 2

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ադրբեջանում ԱՄՆ դեսպանի հակահայկական «առաքելությունը» բխում է Վաշինգտոնի հայկական քաղաքականության բնույթից

ՀԱԿՈԲ ՉԱԼԲՅԱՆ

Ադրբեջանական «Մեր դարը» շաբաթաթերթին օրերս տված հարցազրույցում Ադրբեջանում ԱՄՆ դեսպան Ռոս Վիլսոնը «Լեռնային Ղարաբաղում վիթխարի քանակությամբ զենքի կուտակման» իր հեղինակավոր կարծիքն արտահայտելիս դա լուրջ խնդիր է համարել եւ հերքական անգամ ընդգծել է, որ Հայաստանն ագրեսոր պետություն է, իսկ ղարաբաղյան զինված ուժերն աջատողականներ են: Թերեւս հերքականի պարագան հիմք է հանդիսացել, որպեսզի **«Ազգը»** հուլիսի 21-ի համարում վերստին անդրադառնա Ադրբեջանում ԱՄՆ դեսպանի հակահայկական «առաքելությանը»:

Հիշեցման կարգով նշենք, որ Վիլսոնը համանման կարծիք էր հայտնել նաեւ «Նեզավիսիմայա գազետայի» հուլիսի 5-ի համարում եւ այդ կարծիքի վերաբերյալ «Սա Վաշինգտոնի պաշտոնական դիրքորոշման արտահայտությո՞ւնն է» հարցին միանշանակ պատասխանել է՝ այո: Դրան էին հետեւել նույն դեսպանի պարզաբանումները հունիսի վերջերին ադրբեջանական «Բիրլիք դունյասիում», որտեղ նա Վաշինգտոնի վերոհիշյալ դիրքորոշումները հիմնավորել էր ԱՄՆ պետդեպարտամենտի մարտի 30-ի հաղորդագրությամբ: Նա հաղորդագրությունը որակել էր փաստաթուղթ եւ ավելացրել. «Այս փաստաթղթով Հայաստանը ճանաչվում է ագրեսոր պետություն, ղարաբաղյան զինված ուժերը՝ անջատողականներ»:

Տվյալ դեպքում կարեւորը, ինչ խոսք, ամերիկյան դեսպանը չէ, այլ ԱՄՆ պետդեպարտամենտի հաղորդագրությունն ու դրա՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման Քի Վեսթի բանակցությունների նախօրյակին՝ հենց ապրիլի 30-ին տարածումը: Հատկանշական է, որ Հայաստանում ԱՄՆ դեսպանատունն այդ հաղորդագրությունն **«Ազգի»** խմբագրությանն ուղարկելիս տեխսից հանել էր Հայաստանն ագրեսոր պետություն ճանաչելու, ինչպես նաեւ ղարաբաղյան զինված ուժերը որպես անջատողականներ որակելու հասվածները:

Տես էջ 4

Զինամթերք թաքցնելու համար ձերբակալված է ՀՀԾ Վանաձորի խորհրդի նախագահը

Ս. թ. հուլիսի 23-ին Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության նախարարության ատյանակիցների օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում Վանաձոր քաղաքի Մյասնիկյան փողոցի թիվ 54 տան նկուղում եւ ՀՀՇԿ տարածային գրասենյակում հայտնաբերվել եւ առգրավվել է մեծաքանակ զինամթերք, այդ թվում՝ 70 հատ լարով պայթուցիչ դետոնատոր, 60 մետր բիֆորդյան լար, 20 հատ Ֆ-1 տեսակի նռնակ՝ իրենց պայթուցիչներով, 20 «ամոնալ» տեսակի պայթուցիչ գլանիկ, 11 «տրոտիլ» տեսակի պայթուցիչ գլանիկ, տարբեր զինատեսակների մոտ 5 հազար փամփուշտներ, ինքնաշեն ինքնաձիգ, զենքի մասեր եւ այլն:

Ըստ նախնական տվյալների, չարաշահելով վերոնշված հասցեում բնակվող տանտիրուհու վստահությունը՝ դրանց մեծ մասը վերջինիս պահ է տվել Գուգարքի անտառտնտեսության փոխտնօրեն, ՀՀՇ կուսակցության Վանաձորի տարածային կազմակերպության խորհրդի նախագահ Աշոտ Մանուկյանը, որը ձերբակալված է: Փաստի առթիվ հարուցված է քրեական գործ, որը վարում է ՀՀ ԱԱՆ քննչական վարչությունը:

ՀՀ ԱԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՍՈՒԼԻ ՀԵՏ ԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

«Երկնագույն հոսքը» որբացավ

ՄՈՍԿՎԱ, 24 ՀՈՒԼԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Թուրքիայի էներգետիկայի ծյուղի ղեկավարության կազմում տեղի են ունեցել փոփոխություններ, որոնք կարող են ազդել Ռուսաստանի հետ համագործակցության վրա եւ, մասնավորապես, «Երկնագույն հոսք» գազամուղի ապագայի վրա: Աշխատանքից ազատվել են BOTAS պետական խողովակաշարային ընկերության ղեկավար Գոհան Յարդիմը եւ նրա տեղակալ Նադիր Բիհիքոլուն: Նրանց երկրորդական պաշտոններ են տրվել էներգետիկայի նախարարությունում, տեղի ունեցածին ոչ մի պաշտոնական պարզաբանում չի տրվել:

«Անատոլու» լրատվական գործակալության հաղորդման համաձայն, պաշտոնաթողությունները պայմանավորված են 3,2 միլիարդ դոլար ընդհանուր արժողությամբ «Երկնագույն հոսք» նախագծի շուրջ կոռուպցիայի հետաքննությամբ:

Թուրքական կողմից նախագծով զբաղվում է BOTAS-ը, իսկ նրա ղեկավարների գործունեության հետաքննությունն սկսվեց այն բանից հետո, երբ «Երկնագույն հոսքի» ընդդիմախոսները հայտարարեցին, թե գազը կարելի էր շատ ավելի էժան գնել Թուրքմենստանից, եւ հավանաբար Յարդիմը «հենց այնպես չէր» հրաժարվել այդպիսի խոշոր նախագծի շուրջ հայտամրցույթ անցկացնելուց: Տարեսկզբին դատախազությունը BOTAS-ի ղեկավարությանն արգելեց հեռանալ երկրի սահմաններից: Այնուհետեւ համառուրեր էին պտտվում, որ «ըստ նշանակության» չի ծախսվել 50 մլն դոլար: Ասում են, թե հետաքննիչների հաջորդ թիրախը լինելու է փոխվարչապետ Մեսութ Յըլմազը, որը 1997 թվականին Մոսկվայի հետ արձանագրություն էր ստորագրել նախագծի իրացման մասին:

Հանրապետական գրասենյակներ

Ռոբերտ Քոչարյան. Կուսակցությունը գույք չէ, որ անցնի ժառանգաբար

ԵՐԵՎԱՆ, 24 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ազգային ժողովում ստեղծված «անեկդոտային իրավիճակը», «այդպիսի լղոզ քաղաքական դաշտը երկար չէր կարող գոյատեւել, եւ կատարվեց այն, ինչ կատարվեց»: Այսպես մեկնաբանեց «Միասնություն» դաշինքի հետ կապված վերջին իրադարձությունները ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը՝ հուլիսի 24-ին լրագրողների հետ զրույցում: Նախագահը նշեց, որ կատարվածից կարելի է երկու եզրակացություն կատարել: Նախ, որ նախընտրական ցուցակներում առաջին տեղերում գտնվող, կուսակցությունում վճռորոշ դեր ունեցած մարդկանց կուսակցությունից դուրս գալը նշանակում է, թե շատ թե քիչ կայացած մարդիկ ուզում են հավասարակշռված քաղաքականություն վարել: Եւ երկրորդ, որ «կուսակցությունը գույք չէ, որ անցնի ժառանգաբար»:

Վերջին 7 օրում խեղդվել է 5 մարդ

ԵՐԵՎԱՆ, 23 ՀՈՒԼԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ արտակարգ իրավիճակների վարչության (ԱԻՎ) հաղորդմամբ, վերջին յոթ օրում հանրապետությունում արձանագրվել է ջրում խեղդվելու հինգ դեպք: Վերջինը գրանցվել է հուլիսի 22-ին՝ Գեղարքունիքի մարզի Չկալովկա գյուղի լողափում: Ջրհեղձ է եղել Ստամբուլի բնակիչ, ազգությամբ քուրդ Մահմեդ Թեդմիրը: Դեպքի մանրամասները պարզաբանվում են: Ընթացիկ տարվա անցած ժամանակաշրջանում հանրապետության լճերում, գետերում ու ջրավազաններում գրանցվել է 10 այդպիսի պատահար:

ԱԴՐԲԵՋԱՆ

Պատերազմի պատրաստ ժողովուրդն իր զինվորին չի բանտարկում

Վարդան Օսկանյանի հայտարարությունը Բաքվում դժբախտաբար լուրջ շրջկալվեց

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Անցնող ուրբաթ ադրբեջանական դատարանը ոստիկանական ուժերի դեմ բախումներ հրահրելու մեղադրանքով տարբեր ժամկետներով դատապարտեց ղարաբաղյան պատերազմի 16 վետերանների, ընդ որում նրանցից 8-ը բանտարկվեցին 1-6 տարի ժամկետով: Ղարաբաղյան պատերազմի ադրբեջանցի վետերանները ձերբակալվել էին փետրվարին. նրանք երկրի իշխանություններից պահանջել էին բարձրացնել թոշակները, որոնք ամսական կազմում են ընդամենը 15-25 ԱՄՆ դոլարին համարժեք մանաթ: Իրականում Հեյդար Ալիեւի կամքը եւ ցանկություններն իրականացնող ադրբեջանական դատարանը վերոնշյալ վետերաններին պատժելով, սեփական բանակի դատավճիռը կայացրեց՝ այսուհետեւ նրանք, ովքեր ժամանակին մասնակցել են պատերազմին եւ նրանք, ովքեր պատրաստ են հանուն Ադրբեջանի զենք վերցնել, թող որեւէ ակնկալիք չունենան պետությունից: Դատավճիռը «Մուսավաթ» կուսակցության առաջնորդ Իսա Գամբարն այսպես մեկնաբանեց. «Այս եղանակով նախագահ Ալիեւը ցանկանում է ցույց տալ, որ նմանատիպ բոլոր դեպքերում կորդեգրի խիստ պատիժներ», իսկ Լիբերալ կուսակցության առաջնորդ Լալա Շովքեթ Հաջիեւան ասաց. «Պատերազմի վետերանների նկատմամբ երկրի իշխանությունների վերաբերմունքը ղարաբաղյան հակամարտության ցուցիչն է: Այս գործընթացը կտանի Ղարաբաղի կորստին»:

Տես էջ 5

ՔԱՂԱՔԱՑԻԿ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Քաղաքացիական ծառայության օրենքն ընդունվեց

Սկսվեց աղեսի գոտու ծրագրի քննարկումը

Ազգային ժողովի երեկվա նիստը կարելի է արդյունավետ համարել: Խորհրդարանն առաջին ընթերցմամբ ընդունեց «Քաղաքացիական ծառայության մասին» եւ «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքում լրացում կատարելու օրենքները: Հիշեցնենք, որ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքը նախորդ քննարկման ժամանակ ընդունելու համար չբավարարեց ընդամենը մեկ ձայն: Խորհրդարանը երեկ ընդունեց նաեւ ՀՀ նախագահի առարկությունը «Տների եւ հիշատակի օրերի մասին» օրենքի վերաբերյալ: Այսինքն՝ բանակի օր հաստատվեց հունվարի 28-ը, նախկինում ընդունված սեպտեմբերի 20-ի փոխարեն:

Բաշխիչ ցանցերի սեփականաշնորհմանը վերաբերող նոր օրենքի քննարկումից հետո էներգետիկայի նախարար Կարեն Գալուստյանը երեկ ներկայացրեց «Էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու» օրենքի նախագիծը: Նախկինում բաշխիչ ցանցերի սեփականատեր դարձած ընկերությունն իրավունք ուներ առանց էներգետիկայի հանձնաժողովի թույլտվության գնել էներգիա արտադրող որեւէ ձեռնարկության բաժնետոմսերի միայն 25 տոկոսը: Այժմ այդ դույթն առաջարկվում է հանել: Դա նշանակում է, որ արտադրող ձեռնարկությունների մասնավորեցման ժամանակ բաշխիչ ցանցերի սեփականատեր ընկերությունը կարող է մասնակցել այդ գործընթացին մյուս ընկերությունների հետ հավասար իրավունքներով: Նախարար Կարեն Գալուստյանն անընդունելի համարեց այն կացությունը, երբ որեւէ ընկերություն ցանկանա ներդրումներ կատարել, իսկ մենք օրենքով դա չթույլատրենք: Արտահերթ նիստի օրակարգում ընդգրկված մյուս «Լիցենզավորման մասին» եւ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերը եւս կառավարության բաշխիչ ցանցերը

ՍՐՄԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ներդնողի համար գրավիչ դարձնելու նպատակի բաղկացուցիչ մասն էին կազմում: Միանշանակ է, որ այս փոփոխությունների փաթեթն ակնհայտորեն գալիս է հաստատելու, որ կառավարությունն ամեն ինչ անելու է բաշխիչ ցանցերի մասնավորեցման գործում երկրորդ սայթաքումը թույլ չտալու համար:

Արտահերթ նիստի քննարկած վերջին հարցը աղեսի գոտու վերականգնման համալիր ծրագրին էր վերաբերում: Համապատասխան օրենքի նախագիծը ներկայացնող քաղաքաշինության նախարար Դավիթ Լոիյանը նշեց, որ ներկայումս աղեսի գոտում 15 հազար ընտանիք չունի բնակարան: Դրանցից շուրջ 11 հազարին պետությունը պարտավորվել է աջակցել: Մնացածը ամրացման ենթակա բնակարաններն են: Ըստ նախարարի, մինչեւ 2003 թ. աղեսի գոտու խնդիրը կլուծվի: Այդ նպատակով ճշտվել են նաեւ ֆինանսավորման աղբյուրները՝ Լինսի հիմնադրամ, Կարմիր խաչ, USAID, անհատական բնակարանային շինարարություն եւ այլն: Դավիթ Լոիյանը հայտարարեց, որ այն ժամանակ աղեսի գոտու համալիր վերականգնման մասին կարելի է խոսել, երբ անօթեւան բնակիչներից յուրաքանչյուրն ունենա իր բնակարանը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՊԱՇԽԱՐՔԱՆ

Ով է սիրում հայրենիքը չինացու պես

ՀԺԿ-ն երեկ լքեցին եւս երկու պատգամավորներ՝ Ալոյզ Գալոյանը եւ Միսակ Մկրտչյանը: Փոխարենը համալրվեց «Ժողովրդական պատգամավորը»: Այս խումբ մուտք գործելու դիմում էր ներկայացրել Հարություն Մուրադյանը: Սակայն հիմնական քաղաքական իրադարձությունը երեկվա խորհրդարանական կյանքում ՀԿԿ-ից հեռացված պատգամավոր Յուրա Մանուկյանի ասուլիսն էր: Նախապես խոստանալով երկար չզբաղեցնել լրագրողներին, Յուրա Մանուկյանը սկսեց 3000 տարի առաջ գոյություն ունեցած մարդկանց ձգտումներից, այնուհետեւ անդրադարձավ Չինաստանին, Ստալինին եւ, ի վերջո, փորձեց մոտենալ իր նկատմամբ անարդար վարվելու բուն պատճառին: Նրա ներկայացմամբ Հայկոմկուսում ոչինչ չի փոխվել 1920-ական թվականներից: Շարունակվում են կամայական որոշումներ ընդունվել առանց կարծիքներ հաշվի առնելու: Նա հերքեց այն մեղադրանքը, որ իրեն կուսակցությունից Ստրասբուրգ ուղարկելու որոշումը Հրանտ Ոսկանյանը միանձնյա է ընդունել, նշեց, որ իրեն մեղադրում են իշխանամետ լինելու մեջ: Յուրա Մանուկյանը հայտնեց, որ եվրախորհրդում ինքը ձգտել է ներկայացնել եւ «եվրոպական դարձնել» Սեւանի խնդիրը: Կոմունիստ պատգամավորը հայտարարեց, որ ինքը միշտ եղել է եւ կմնա կոմունիստ, բայց նախ եւ առաջ՝ հայ: Նա նշեց նաեւ, որ ինքը «չինացու պես սիրում է Հայաստանը», այնուհետեւ ճշտելով, որ ինքը սիրում է իր հայրենիքը այնպես, ինչպես չինացիներն իրենց հայրենիքը:

Ա. Մ.

Բարձր տեխնոլոգիաների եւս մեկ ընկերություն Հայաստանում

«Վիասֆեր» (ԱՄՆ) ընկերության կենտրոնը գտնվում է այսպես կոչված Սիլիցիումային հովտում (Silicon Valley), որն ինֆորմացիոն տեխնոլոգիաների հիմնական վայրն է Մ. Նահանգներում: «Վիասֆերը» ներդրումային ընկերություն է, ներդնողներին ներգրավում է այս կամ այն ծրագրում եւ ապահովում արտադրանքի իրացումը: Ինչպես «Տրանզիստոր» ձեռնարկության տարածքում «Վիասֆերի» հիմնադրած տեխնոպարկի բացման ժամանակ հայտնեց ընկերության տնօրեն Թոնի Մորոյանը, մասնաճյուղեր ունի Ճապոնիայում, Իտալիայում, ԱՄՆ-ում, ինչպես նաեւ Արեւելյան Եվրոպայում, Հնդկաստանում: Թոնի Մորոյանը նշեց, որ իրենք ցիշտ են վարվել Հայաստանում գործունեություն սկսելու առումով: Նրա կարծիքով, Հայաստանում կան տաղանդավոր մարդիկ: Որպես ապացույց համեմատություն անցկացվեց Հնդկաստանի հետ: Եթե Հնդկաստանում որեւէ պատվեր է տրվում, ճշտորեն կատարվում է: Հայաստանում իջեցված պատվերը եւս հստակորեն կատարվում է, նաեւ առնվազն 10 առաջարկ է ստացվում, թե ինչպես կարելի է այդ աշխատանքն ավելի լավ կատարել: «Վիասֆերի» տնօրենը հույս հայտնեց, որ Հայաստանի իշխանությունները կաջակցեն որպեսզի այս պահի խնդիրների՝ մտավոր սեփականության եւ հեղինակային իրավունքի օրենսդրական կարգավորումը:

«Տրանզիստորում» բացված տեխնոպարկը տարբեր ընկերություններին (առայժմ դրանք երեքն են) տեղ է հատկացնում, ապահովում է ենթակառուցվածք, պատվերներ իջեցնում եւ նրանց արտադրանքը ստանում դուրս բերում: Տեխնոպարկի գոյությունը հիմք է հետագայում բիզնես-ինկուբատոր, այսինքն՝ նոր տեխնոլոգիաների, նոր ձեռնարկությունների ստեղծման վայր դարձնելու համար: «Տրանզիստորի» ձեռքբերումով «Վիասֆերը» պարտավորվել է փուլային ներդրումներ կատարել: Երեկ, սակայն, այդ ներդրումների ծավալների մասին ոչինչ չասվեց: Այդուհանդերձ, այն, որ տեխնոպարկի բացման արարողությանը ներկա էին հանրապետության նախագահը եւ այլ բարձրաստիճան պաշտոնյաներ, ինֆորմացիոն տեխնոլոգիաների ընկերությունների ղեկավարներ, գիտնականներ, վկայում է իրադարձության կարեւորությունը:

Ա. Մ.

ՀԱԿԻՐՃ

Նաիրա Մելքումյան. «Հուսով եմ՝ «Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովը» չի զբաղվի ԼՂ հարցով»

ԼՂՀ արտգործնախարար Նաիրա Մելքումյանը «Ազատ Արցախ» թերթին (24-ը հուլիս) տված հարցազրույցում հույս է հայտնել, որ հուլիսի 10-ին ձեւավորված այսպես կոչված «Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովը» չի զբաղվի ղարաբաղյան խնդրով: «Գաղտնիք չէ, որ Հայաստանի հետ հարաբերությունները բնականոն դարձնելու գործում Թուրքիան առաջ է քաշում նախապայմաններ՝ ղարաբաղյան խնդիրը իր «սցենարով» լուծելու տեսքով», ասել է տկն Մելքումյանը, ընդսմին նշելով, որ «հայ-թուրքական հաշտեցումը հնարավոր է միայն անցյալի հանցագործությունները ճանաչելուց հետո»:

Ստեփանակերտի քաղաքապետի պաշտոնի համար՝ 13 թեկնածու

Սեպտեմբերի 5-ին ԼՂՀ-ում տեղի կունենան տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ: Ստեփանակերտի քաղաքագլուխ ընտրվելու ցանկություն են հայտնել եւ քաղաքային ընտրական հանձնաժողովում գրանցվել 13 թեկնածուներ, այդ թվում գործող քաղաքագլուխ Բորիս Առուշանյանը, որը նաեւ «Արմենական» կուսակցության առաջնորդն է, եւ ՀՅԴ անդամ Մաքսիմ Միրզոյանը: «Մեդիամաքսը» հաղորդում է, որը մյուս 11 թեկնածուներն անկուսակցականներ են: Ի տարբերություն Հայաստանի մայրաքաղաք Երեւանի, որտեղ քաղաքապետը նշանակվի է, ԼՂՀ մայրաքաղաքում այդ պաշտոնն ընտրվի է:

«Մենք տեղյակ էինք, բայց ոչ մասնակից»

Սկիզբը էջ 1

Բայց սա առհասարակ երկխոսությունների եւ ոչ այս մեկի մասին էր: ՀՀ արտգործնախարարը եւս մեկ անգամ հաստատեց, որ այո, իրենք տեղյակ են եղել հանձնաժողովի ստեղծման աշխատանքների մասին եւ ասաց, որ եթե անգամ փորձեին խոչընդոտել, վերջինս միեւնույն է, կայանալու էր:

Պատմաբաններից մեկի հարցին, թե ի՞նչ է հաշտեցումը նշանակում դիվանագիտական բառապաշարում, Վ. Օսկանյանը պատասխանեց. «Եթե հանձնաժողովի հայտարարության մեջ նպատակների թվում մատնանշված չէ ցեղասպանության խնդիրը, այդ դեպքում իրեն իսպառ անհասկանալի է, թե երկու կողմերն այլեւս ինչ խնդիրների շուրջ պիտի հաշտվեն»: Գալով անընդհատ հնչող մտահոգությանը, թե հաշտեցման հանձնաժողովի հանգամանքը Թուրքիան կարող է օգտագործել տարբեր երկրների խորհրդարաններում Հայոց ցեղասպանության խնդրի ճանաչման հարցը բարձրացնելիս՝ ասելով, թե այլեւս մի միջամտեք եւ մի խանգարեք, ՀՀ արտաքին գերատեսչության ղեկավարը նշեց, թե սա համոզիչ փաստարկ է, բայց ոչ միանշանակ:

«Կարծում եմ՝ բոլորս այստեղ համաձայն ենք, որ այս հանձնաժողովը ցեղասպանության խնդրի ճանաչման հարցում որեւէ տեղաշարժ չի գրանցելու: Ասենք, վեց ամիս կամ մեկ տարի հետո մենք կարող ենք այս հանգամանքի վրա դարձնել աշխարհի ուշադրությունը, հատկապես ԱՄՆ-ի, ասելով՝ նայեք, հայերս նույնիսկ սրան գնացինք, սա էլ փորձեցինք, բայց որեւէ արդյունք չկա, թուրքերը պատրաստ չեն: Եվ միակ հնարավոր ճանաչումն առաջին հերթին ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ընդունումն է, երկրորդը՝ ՄԱԿ-ի: Այնպես որ, վերջապես թուրքերը զգան, որ որեւէ դիմադրություն չեն կարող ցուցաբերել նման գործընթացի դեմ», նշեց պրն Օսկանյանը:

Հավաքին ներկա ՀԴԿ նախագահ Արամ Սարգսյանը չհամաձայնեց արտգործնախարարի հետ, թե ԱՄՆ-ը կարող է վեց ամսից համոզվել, նշելով, որ հանձնաժողովում հայկական կողմի ներկայացուցիչներն ընտրված են ՀՀ նախկին նախագահի համաձայնությամբ ու մասնակցությամբ, իսկ քանի որ սույն նախաձեռնությունը ԱՄՆ պետդեպարտամենտի հովանավորությամբ է, վերջինս հստակ ցույց է տալիս, թե ինքը ում հետ է ուզում աշխատել Հայաստանում:

ՀՌԱԿ ատենապետ Ռուբեն Միրզախանյանն էլ նշեց, թե հաշվի առնելով ԱՄՆ պետդեպարտամենտի հայտարարություններն այս խնդրի առթիվ, թերեւս չի կարելի շարունակել ոչ լուրջ վերաբերմունքը փաստի հանդեպ: Արտգործնախարարը տեղեկացրեց, որ եկող շաբաթների ընթացքում պատրաստվում է ՀՀ պետական դիրքորոշման հրապարակումը: «Այս առումով ողջունում եմ ներկա գիտաժողովի նախաձեռնությունը: Ես հանդիպելու եմ նաեւ քաղաքական ուժերի ներկայացուցիչների հետ՝ նրանց տեսակետներին եւս ծանոթանալու համար»: Պրն Օսկանյանը պատասխանեց նաեւ պրն Միրզախանյանի հարցին, թե նպատակահարմար չէ՞ ստեղծել իրապես երկխոսության ունակ հայ-թուրքական հանձնախումբ: ԱԳ նախարարը նախ հարցադրում արեց, թե այդ նոր մարմնի լիազորությունները որտեղի՞ց են գալու, պետական՞ է լինելու, թե՞ ոչ: Ըստ նրա՝ հանձնախմբի անդամների խնդիրը պիտի լուծել այնպես, որ նրանք ներկայացնեն ժողովրդի շահերը, բայց առանց պետական մասնակցության: «Սա հեշտ չի լինելու այսօրվա մեր պայմաններում, բայց նաեւ երեւի միակ ճանապարհն է, որպեսզի կարողանանք հարցերը կենդանի պահել»: Եթե «Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի» ստեղծումը մեկ անգամ եւս ապացուցեց, որ հայ-թուրքական մերձեցումն այսօր բխում է ԱՄՆ-ի շահերից, Թուրքիան էլ ձգտում է դրան, դեռ չի նշանակում, թե մենք էլ չենք ուզում Թուրքիայի հետ հարաբերությունների նորմալացում: Եվ եթե Թուրքիայի հետ մեր հարաբերությունները բարելավվեն, ըստ Վ. Օսկանյանի, պիտի դրանք կշռենք, տեսնելու համար, թե ի հաշիվ ինչի է տեղի ունեցել: «Եթե մենք լուրջ զիջումների չենք գնացել, մեր պատմական իրավունքները չենք թողել այդ հարաբերությունները բարելավելու համար, կարծում եմ՝ մենք հաջողել ենք»:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության մեկ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս՝ 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ / հեռ. 529353
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայութիւն
/ հեռ. 529353
Apple Macintosh
համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են. համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ՊՈՒՆԿՈՒՄ

Ռավենննայի երաժշտական փառատոնը, որ 1700-ամյակի տոնակատարությունների առիթով մեկ օրով իյուրընկալվեց Հայաստանում, կատարողական բարձր արվեստ ցուցաբերելուց բացի՝ ասես ակամա առաջադրեց մեզ համար չափազանց կարեւոր եւ հուսադրող իրողության. թող պարզունակ չինչի, սակայն Հայաստանում դեռեւս աղրում է արվեստի սերը, բարձրասել է նվագախումբ, երգչախումբ եւ, ի վերջո, դիրիժոր, որն իրոք մեծություն է: Միայն հանճարեղ երաժշտությունը թերեւս բավական չէ ունկնդրին ամբողջապես «կլանելու» համար. կատարումը եւս պիտի արժանի լինի երաժշտությանը: Տաղանդավոր դիրիժորի ձեռին ու կամքին հնազանդ՝ չափազանց զգայուն, բարձր երաժշտականություն եւ տեխնիկա ունեցող նվագախումբ, որ ասես մեկ մարմին լինի, հրաշալի երգչախումբ եւ մենակատարներ, որոնք ունկնդրին պահանգամ «թույլ չեն տալիս» թուլացնել ուշադրությունը. ահա զգացումները, որ ապրում ես համերգի ընթացքում: Ունկնդրին, իրոք, ավելին պետք չէ. պարզապես զգալ, որ մեղեդին առաջնորդում է քեզ, իսկ կատարողները սոսկ երաժշտություն են մատուցում՝ առանց ընդգծելու իրենց արհեստավարժությունը՝ այնքան տեսանելի, գրեթե շոշափելի, որ այդ մասին արդեն չես էլ մտածում:

«Բարեկամության կամուրջներ» խորագիրը կրող Ռավենննայի փառատոնին իրենց ողջույնի խոսքն էին հասցեագրել հանրապետության նախագահն ու Ամենայն հայոց կաթողիկոսը: «Ինչպես փառատոնի կազմակերպիչներն ու մասնակիցները, այնպես էլ մենք համոզված ենք, որ բարձրարվեստ երաժշտության համամարդկային լեզուն ընդունակ է խաղաղության ու եղբայրության կամուրջներ գցել ժողովուրդների եւ երկրների միջեւ», նշված էր Որբերտ Քոչարյանի ուղերձում: Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի օրհնության խոսքում մասնավորապես արձանագրված էր. «Թարգմանության կարիք չունի արվեստի լեզուն, իսկ երաժշտությունն առավել եւս, որ անմիջական ազդեցությամբ ազնվացնում է մարդկային հոգիները, մերձեցնում միմյանց եւ հասկանալի դարձնում ժողովուրդների երկխոսությունը»:

Ռավենննայի փառատոնի երեւանյան համերգից ստացած տպավորությունները շարադրելով, մի քանի տեղեկություններ հաղորդենք հենց փառատոնի մասին: Աշխարհում մեծ համարում ունեցող Ռավենննայի փառատոնը, «Լա Սկալայի» ֆիլհարմոնիկ նվագախմբի գլխավոր դիրիժոր Ռիկարդո Մուտիի ղեկավարությամբ, նախկինում ընթացել է մի շարք քաղաքներում, ուր «Բարեկամության կամուրջներ» խորագիրն ավելի քան տեղին է եղել Սարաեւոյում, Բեյրութում, Երուսաղեմում, Մոսկվայում եւ այլուր: Ի դեմ, ինչպես արդեն նշել ենք, փառատոնը, տարօրինակ մի «զուգադիպությամբ», Երեւանից հետո շարունակվելու եւ եզրափակվելու էր Սամբուլում: «Բարեկամության կամուրջների» գաղափարին նման շարունակությունն, անշուշտ, կապակցվում է, սակայն որեւէ կերպ չի առնչվում 1700-ամյակի տոնակատարության գաղափարին:

Ի եզրափակումն նշենք, որ հայ ունկնդրին տոն մատուցելու գաղափարն իրեն գործնականում արդարացրեց. մենք չափազանց երկար կհիշենք «Լա Սկալայի» համերգը եւ այն 2 ժամը, երբ դահլիճում հավաքված մտավորականության, արվեստի ներկայացուցիչներին, քաղաքական գործիչներին, հասարակության խայտաբղետ շերտավորումներին, բոլորին իշխում էր Վերդիի երաժշտությունը, եւ վերացել էինք մեր «հարազատ» իրականությունից: Վերացել էինք, որպեսզի տեղափոխվենք մեկ այլ իրականություն, ուր թեւածում էին Վերդիի «Նաբուկկո» օպերայի հանրահայտ խմբերգի հանճարեղ հնչյունները...

ԱՆՈՒՇ ԴՈՎԼԱԹՅԱՆ

«Լա Սկալայի» երեւանյան համերգը մեզ տեղափոխեց մեկ այլ իրականություն

ծաշակը գնահատելու եւ կարոտելու կարողությունը: Իրոք, ուրախալի է, որ մարգահամերգայինի հսկայական դահլիճում այդ օրը չկար եւ ոչ մի ազատ տեղ. ուրեմն պիտի այլ պատճառներ փնտրենք մեզանում հաճախ հնչող, ինքնախոցահարության շնչով տոգորված դժգոհության համար, թե ինչու են տեղական համերգներն ու մեր արվեստագետների մասնակցությամբ այլ միջոցառումներն անցնում մեծ մասամբ կիսադատարկ դահլիճներում: Երեւի մարդիկ պարզապես հոգնել են լավագույնի փոխարեն մշտապես սպանալու ինչ-որ կերպ ստեղծվածը: չէ՞ որ այս ձեւով ու միջոցներով մշակույթ պահելն առնվազն խաբեություն է, իսկ եղածով մխիթարվելը՝ ինքնախաբեություն:

Ինչեւէ, համերգը կայացավ եւ անմոռանալի տպավորություն թողեց: Համերգի սկզբում ելույթ ունեցավ Երեւանի կամերային երգչախումբը՝ Հարություն Թոփիկյանի ղեկավարությամբ (երգչախումբն, ի դեմ, համերգի եզրափակիչ մասում միացավ «Լա Սկալայի» կազմին՝ նվագախմբի եւ զույգ երգչախմբի համար գրված «Te Deum»-ը կատարելու), որից հետո շուրջ 2 ժամ հնչում էր միայն Վերդիի երաժշտությունը՝ դրվագներ օպերաներից, «Stabat Mater»-ը նվագախմբի եւ երգչախմբի համար: Ունկնդրելով զգում ես, թե ինչ նի, հրաշալի երգչախումբ եւ մենակատարներ, որոնք ունկնդրին պահանգամ «թույլ չեն տալիս» թուլացնել ուշադրությունը. ահա զգացումները, որ ապրում ես համերգի ընթացքում: Ունկնդրին, իրոք, ավելին պետք չէ. պարզապես զգալ, որ մեղեդին առաջնորդում է քեզ, իսկ կատարողները սոսկ երաժշտություն են մատուցում՝ առանց ընդգծելու իրենց արհեստավարժությունը՝ այնքան տեսանելի, գրեթե շոշափելի, որ այդ մասին արդեն չես էլ մտածում:

«Բարեկամության կամուրջներ» խորագիրը կրող Ռավենննայի փառատոնին իրենց ողջույնի խոսքն էին հասցեագրել հանրապետության նախագահն ու Ամենայն հայոց կաթողիկոսը: «Ինչպես փառատոնի կազմակերպիչներն ու մասնակիցները, այնպես էլ մենք համոզված ենք, որ բարձրարվեստ երաժշտության համամարդկային լեզուն ընդունակ է խաղաղության ու եղբայրության կամուրջներ գցել ժողովուրդների եւ երկրների միջեւ», նշված էր Որբերտ Քոչարյանի ուղերձում: Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի օրհնության խոսքում մասնավորապես արձանագրված էր. «Թարգմանության կարիք չունի արվեստի լեզուն, իսկ երաժշտությունն առավել եւս, որ անմիջական ազդեցությամբ ազնվացնում է մարդկային հոգիները, մերվարությամբ, նախկինում ընթացել է մի շարք քաղաքներում, ուր «Բարեկամության կամուրջներ» խորագիրն ավելի քան տեղին է եղել Սարաեւոյում, Բեյրութում, Երուսաղեմում, Մոսկվայում եւ այլուր: Ի դեմ, ինչպես արդեն նշել ենք, փառատոնը, տարօրինակ մի «զուգադիպությամբ», Երեւանից հետո շարունակվելու եւ եզրափակվելու էր Սամբուլում: «Բարեկամության կամուրջների» գաղափարին նման շարունակությունն, անշուշտ, կապակցվում է, սակայն որեւէ կերպ չի առնչվում 1700-ամյակի տոնակատարության գաղափարին:

Ի եզրափակումն նշենք, որ հայ ունկնդրին տոն մատուցելու գաղափարն իրեն գործնականում արդարացրեց. մենք չափազանց երկար կհիշենք «Լա Սկալայի» համերգը եւ այն 2 ժամը, երբ դահլիճում հավաքված մտավորականության, արվեստի ներկայացուցիչներին, քաղաքական գործիչներին, հասարակության խայտաբղետ շերտավորումներին, բոլորին իշխում էր Վերդիի երաժշտությունը, եւ վերացել էինք մեր «հարազատ» իրականությունից: Վերացել էինք, որպեսզի տեղափոխվենք մեկ այլ իրականություն, ուր թեւածում էին Վերդիի «Նաբուկկո» օպերայի հանրահայտ խմբերգի հանճարեղ հնչյունները...

ԱՆՈՒՇ ԴՈՎԼԱԹՅԱՆ

Գարեգին Բ կաթողիկոսի հանդիսապետությամբ Քանաքեռում բացվեց մանրանկարչության դպրոցի նորոգված շենքը

Նորին Սրբությունը Հայ եկեղեցու բարշրագույն պարգեւը հանձնեց բարերար Իշխան Բիսեճիին

ՀԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾԻՆ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱԿՍՐԳ, 24 ՀՈՒԼԻՍ: Հուլիսի 24-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցավ Երեւանի Քանաքեռ թաղամասում, Սբ. Հակոբ եկեղեցու հարեւանությամբ գտնվող Մայր աթոռ Սբ. Էջմիածնի եւ Հայկական բարեգործական ընդհանուր միության մանրանկարչության արվեստի դպրոցի նորոգված շենքի բացման արարողությունը:

Շենքի նորոգման աշխատանքների հովանավորությունը Կանադայի հայոց թեմի առաջնորդ Տ. Հովնան արք. Տերտերյանի հորդորով մեկ տարի առաջ սանձնել էր կանադահայ բարերար Իշխան Բիսեճին, որին եւ Ամենայն հայոց հայրապետը շնորհեց Հայ եկեղեցու բարձրագույն պարգեւը՝ Սբ. Գրիգոր Լուսավորիչ շքանշանը:

19-րդ դարի միահարկ այս կառույցը՝ Սբ. Հակոբ եկեղեցու նախկին դպրանոցը, վերադարձվել էր եկեղեցուն Հայաստանի անկախացումից հետո միայն: Այստեղ 1992 թվականին Նորին Սրբության՝ այն ժամանակ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդի նախաձեռնությամբ եւ ջանքերով հիմնվեց մանրանկարչության արվեստի դպրոցը: Հայորդյաց տների համակարգում գործող դպրոցում արդեն 9 տարի հայ մանրանկարչական արվեստի հմտություններին են ծանոթանում 5-17 տարեկան երեխաներ ու պատանիներ: Դպրոցի ավելի քան 70 սաները 5-ամյա ուսումնառության տարիների ընթացքում ուսանում են մարանկարչություն, գունանկար, գծանկար, ծանոթանում արվեստի պատմությանը՝ սանալով նաեւ կրոնական գիտեր:

Գյուղատնտեսության բնագավառում նորագույն տեխնոլոգիաների ներդրման եւ գնահատման նպատակով

Գարնանը Գեղարքունիքի մարզի քսան համայնքներում փորձարկման դրվեցին 21 ծրագրեր, որոնք ներառում են կարտոֆիլի վիրուսազերծ տնկանյութի ստացման, գառներին մայրերից վաղաժամկետ անջատման եւ բման, վնասատուների դեմ պայքարում նոր դեղամիջոցների կիրառման եւ այլ ուղղություններ:

Ըստ ծրագրի տեւողության, փորձերի արդյունքները տեսանելի կլինեն աշնանը, սակայն արդեն իսկ նկատելի են դրական տեղաշարժեր, տեղեկացրեց գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի տնօրեն Վրեժ Մելքոնյանը: Մասնավորապես մայրերից վաղաժամկետ անջատված գառների աճ է արձանագրվել, հաջողվել է նաեւ վիրուսազերծ կարտոֆիլի տնկանյութի փորձարկումը: Իրականացվող 21 ծրագրերից յուրաքանչյուրին կցված են մասնագետ-գիտնականներ հանրապետության գիտական հաստատություններից: Արդյունքների վերջնական ամփոփումից հետո, եկող տարվանից ընտրություն բռնած մեթոդները կմասսայականացվեն ամբողջ մարզի տարածքում: Ավելացնենք, որ ծրագրերը ֆինանսավորվում են գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակի եւ ԱՄՆ գյուղատնտեսարանների կողմից, իսկ 20 տոկոսը ներդնում է տվյալ ֆերմերը, որի տարածքում իրականացվում է ծրագիրը:

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՄԵՂԱԴՐԵԼ

«Ես խանգարում եմ ոչ թե սեփականաշնորհմանը, այլ անօրինական սեփականաշնորհմանը

Հայտարարում է Վանյա Մխիթարյանը

ԵՐԵՎԱՆ, 24 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ՀՀ պետական գույքի կառավարման նախարարի նախկին տեղակալ, կոմունիստ Վանյա Մխիթարյանն իր պատասխանությունը գնահատում է որպես պետական ծառայողների նկատմամբ ճնշման փորձ՝ «որպեսզի նրանք ասեն միայն այն, ինչ ցանկանում են լսել իշխանությունները»: Մխիթարյանին պատասխանից ազատելու որոշման պատասխանական հիմնավորումը վերջինիս անհամաձայնությունն է սեփականաշնորհման քաղաքականությանը:

«ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ»-ի թղթակցի հետ զրույցում Վանյա Մխիթարյանը հայտարարեց, որ պետական գույքի կառավարման նախարար Դավիթ Վարդանյանը տվյալ հիմնավորմամբ խաբել է վարչապետ Անդրանիկ Մարգարյանին, ըստ որում՝ վերջինիս գիտությամբ: Իրականում, ըստ Մխիթարյանի, լավ հայտնի է, որ իր գործունեության բնագավառը նախարարությունում ընդհանուր ոչինչ չուներ սեփականաշնորհման գործընթացի հետ. նա զբաղվում էր պետական գույքի հաշվառմամբ ու ցուցակագրմամբ եւ ընդերքի կառավարմամբ: Իսկ իրական պատճառը, նրա կարծիքով, իր հրապարակային ելույթներն են ինչպես լրատվամիջոցներում, այնպես էլ նախարարության կոլեգիաների ընթացքում, որտեղ ինքը մերկացնում էր մեքենայությունների փաստերը:

Լայն արձագանք են ստացել ելույթներն ընդդեմ բնական հարստությունների՝ անտառի, ընդերքի, ձկան թալանի, որոնց տարեկան շրջանառությունը, Մխիթարյանի գնահատմամբ, տարեկան կազմում է մոտ 50 մլն դոլար: «Իմ ճշմարտացիության ապացույցն է բնապահպանության նախարար Մուրադ Մուրադյանի պատասխանությունը»,- նշեց Մխիթարյանը:

Մխիթարյանը նաեւ նշեց, որ նախարարությունում իր աշխատանքի հենց սկզբից կոլեգիաներից մեկի ժամանակ՝ 2000 թ. սեպտեմբերի 1-ին ինքը հարց առաջադրեց նախարար Դավիթ Վարդանյանին, որպեսզի նա դատի տա «Առավոտ» թերթին այն հրապարակման համար, որ իբր Սանկտ Պետերբուրգի կոնյակի գործարանի սեփականաշնորհման համար նոր տերը վճարել է նախարարի թղթախաղի պարտքերը: Մխիթարյանի կարծիքով, այդ թղթակցությունը պահանջում էր այդպիսի վերաբերմունք, քանի որ վարկաբեկում էր ոչ միայն նախարարին, այլեւ նախարարությանն ամբողջությամբ: Մինչ օրս, նշեց Մխիթարյանը, կոլեգիան բացատրություններ չի ստացել, թե ինչու այդպես էլ հայց չներկայացվեց: Մեկ այլ օրինակ՝ Տավուշի մարզում խորանաշատի ՀԷԿ-ի սեփականաշնորհման հարցով հատուկ հանձնաժողով ստեղծելու մասին Մխիթարյանի պահանջը գարնանային կոլեգիայում: Հարցն առաջացավ, ըստ Մխիթարյանի, էներգետիկայի նախարարության սեփականաշնորհման փաթեթի տվյալներում (ըստ տվյալների, չկար որեւէ սարքավորում) եւ տեղից ստացված այն տեղեկությունների միջեւ առկա հակասությունների պատճառով, որ իրականում սարքավորում կա: «Ես խանգարում եմ ոչ թե սեփականաշնորհմանը, այլ անօրինական սեփականաշնորհմանը»,-հայտարարեց Մխիթարյանը:

Նա հատկապես անդրադարձավ բարձրագույն գործադիր իշխանության դիրքորոշմանը, որը, ըստ նրա, փոխանակ ականջ դնելու օրենքի խախտումների մասին ահազանգերին եւ իրավապահ մարմիններին ներգրավելու հետաքննության մեջ, փորձում է իրեն անհաճո պատասխանատուներին:

Կոմկուսը, ըստ Մխիթարյանի, քանիցս անդրադարձել է պետական բարձրագույն պատասխանատուներից կոմունիստներին ետ կանչելու հարցին, մասնավորապես ՀԿԿ ԿԿ վերջին պլենումում: Ըստ նրա, հարցը փակված չէ եւ վերստին քննարկվելու է հերթական պլենումում:

Իտալիան 1 միլիոն դոլարի ցորեն կտրամադրի երաշտից տուժած հայ գյուղացիներին

ԵՐԵՎԱՆ, 24 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Իտալիայի կառավարությունը ՄԱԿ-ի Պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպության (FAO) խողովակներով Հայաստանին կնվիրաբերի 1 մլն դոլարի ցորեն 2001 թ.-ին հանրապետության հարավային շրջաններում երաշտից տուժած գյուղացիական տնտեսություններում աշնանացան կատարելու նպատակով: Ինչպես հայտնեցին Հայաստանում Իտալիայի դեսպանատնից, այդ ծրագրի իրականացման նախապատրաստման համար վերջերս Իտալիայից Հայաստան է ժամանել FAO-ի մասնագետը, որը հանդիպումներ է ունեցել համապատասխան գերատեսչություններում եւ քննարկել իրականացվելիք միջոցառումների ծրագիրը: Ըստ Իտալիայի դեսպանությունից ստացված տեղեկատվության, սերմացու ցորենը Հայաստան կբերվի աշնանացանի նախօրեին:

«Արզնի-Շամիրամ» ջրանցքը՝ ոսկիկանների հսկողության տակ

ԵՐԵՎԱՆ, 24 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: «Ռոդգում» ՊՓԲԸ-ի եւ ՆԳՆ ստորաբաժանման միջեւ կնքված պայմանագրի համաձայն հուլիսի 1-ից «Արզնի-Շամիրամ» ջրանցքում ջրի մատակարարման հսկողությունը իրականացվում է ոստիկանության հատուկ ջոկատի կողմից: Ինչպես հայտնեց «Ռոդգում» ՊՓԲԸ-ի տնօրեն Ալբերտ Խաչատրյանը, դա արվել է ջրագողությունը բացառելու եւ նորմալ ջրամատակարարում ապահովելու նպատակով: Ա. Խաչատրյանը նշեց, որ մինչեւ հուլիսի 1-ը արձանագրված ջրագողության բազմաթիվ փաստերով ոչ մի քրեական գործ չի հարուցվել կամ տուգանք չի սահմանվել: «Արզնի-Շամիրամում» ոստիկանական հսկողության սահմանումից հետո ջրագողության դեպքեր չեն արձանագրվել եւ, ինչպես ենթադրեց «Ռոդգում» ՊՓԲԸ-ի տնօրենը, չի բացառվում, որ առաջիկայում հանրապետության մյուս ջրանցքներում եւս հսկողություն իրականացվի ոստիկանության ջոկատների կողմից:

Նոր փորձարկումները խնայություն են բռնում

հարաբերություններ

«Բոլորս հասկանում ենք, որ հաշտությունը գործընթաց է եւ ոչ առանձին դրվագ»

Ասում է «Հայ-թուրքական հաշտության հանձնաժողովի» անդամ Վան Գրիգորյանը

Անցնող օրերին «Ազգը» բազմիցս անդրադարձավ հուլիսի 10-ին Ժնեւում հայտարարված «Հայ-թուրքական հաշտության հանձնաժողովի» ստեղծմանը. տարբեր տեսանկյուններից փորձեց մեկնաբանել այդ նախաձեռնության նպատակները. իր եւ ուրիշների կարծիքը հայտնեց նախաձեռնության հեղինակների եւ ստեղծման հանգամանքների մասին: Նման հանձնաժողովի կազմությունը չէր կարող տարակարծիք արձագանքների տեղիք չտալ. եւ մենք կաշխատենք հետագայում եւս մեր ընթերցողներին ներկայացնել տեսակետների ողջ սպեկտրը. որը. արձանագրենք. այնքան էլ նպատակավոր չէ նման հանձնաժողովի կազմության եւ ենթադրելի նպատակների ու հեռանկարների նկատմամբ: Այսօր առիթն ունենք ներկայացնելու հատվածներ հանձնաժողովի անդամներից մեկի՝ նախաձեռնող գլխավոր կողմերից Ամերիկայի հայկական համագումարի տնօրենների խորհրդի նախագահ Վան Գրիգորյանի հետ հարցազրույցից. որը գրի է առել Նյու Յորքից Հակոբ Վարդիվառյանը:

–Ուրեմն հանձնաժողովում սփյուռքահայությունը ներկայացված է ընդամենը մե՞կ անձով՝ Դուք:

– Ոչ, հանձնաժողովի անդամ է նաեւ Անդրանիկ Միհրանյանը՝ Ռուսաստանից: Սկզբից ուզեցինք մեր հանձնաժողովը, հասկանալի պատճառներով, զգայուն էր սփյուռքից այլոց մասնակցությունն էլ ապահովելու գործում: Շուտով հանձնաժողովին մաս են կազմելու նաեւ ուրիշ ազգայիններ: Ուրախ եմ, որ հաղորդագրությունն ի վերջո հրապարակվեց, մի մեծ բեռ ընկավ ուսերիցս, քանի որ հանդիպումները ցարդ անց էին կացվում խորհրդապահական պայմաններում:

– Որքա՞ն ժամանակից ի վեր հանդիպումներ եք ունենում. լսել ենք, որ հանդիպումներից մեկը տեղի է ունեցել Վիեննայում:

– Այո, բավական ժամանակից ի վեր: Ճիշտ է, նախապես հավաքվել ենք Վիեննայում:

– Ժնեւում որտե՞ղ էր ձեր հավաքատեղին:

– Դյուրիխի կենտրոնը:

– Կարելի՞ է ձեր այս խումբը նկատել ոչ-պետական հանձնաժողով:

– Ամբողջովին ոչ-պետական հանձնաժողով է, անձնական նախաձեռնությամբ իրար հետ եկած հավաքական մի խումբ:

– Ինչպե՞ս եք բացատրում այն հանգամանքը, որ անդամներից մեկը Հայաստանի ներկայիս իշխանության ընդդիմադիր կազմակերպություններից մեկի՝ ՀՀՇ-ի նախագահ Ալեքսանդր Արզումանյանն է:

– Հայկական կողմի համար կարիք ունեինք նախկին արտաքին գործոց մի նախարարի, որը կարողանար գործակցել մյուս անդամների հետ: Ա. Արզումանյանը փորձառու եւ, մանավանդ, երբեմն անզիջող համարվելու չափ կարծր է բանակցությունների ընթացքում: Վերջապես, երբ թուրքական կողմն ասում էր, որ իրենք ցանկանում են բանակցություններն սկսել «փափուկ» հարցերից, Արզումանյանը ի վիճակի էր նրանց ասելու, որ «իմ կառավարությունը ժամանակին ձեզ տվել է այդ առիթը, սակայն դուք մերժել եք, եւ իրավիճակը էլ ավելի է սրվել, մինչդեռ այժմ ցանկանում եք վերադառնալ 7-10 տարի առաջվա մեկնակետին»: Ինչ վերաբերում է Սիրիայում նախկին դեսպան Դավիթ Հովհաննիսյանին, որ երՊՀ-ի դասախոս է եւ անդամ է ՀՀՇ-ի, շատ լավ գիտի հարցերը: Մեր բոլոր անդամներն էլ թիմային լավ խաղացողներ են:

– Որո՞նք են ձեր ննջարկած գլխավոր հարցերը:

– Շատ հարցեր կան: Անշուշտ, դրանցից առաջինը Հայոց ցեղասպանության հարցն է: Հանձնաժողովում խոսել ենք այս մասին: Մեր գլխավոր նպատակն է առաջին հերթին բնորոշել կարեւորագույն տարբերությունները եւ այնուհետեւ գտնել դրանց մասին բաց խոսակցություն վարելու ուղիները: Նրանք ընդունում են, որ իրենց մեծագույն դժվարություններից մեկն էլ այն է, որ հաջորդական 3 սերունդներ այդ մասին ուղեղալվացման են ենթարկվել, թե ցեղասպանություն չի եղել: Հետեւաբար, հոգեբանորեն մենք չենք կարող պարզապես փոխել նրանց մտածելակերպը: Պետք է վերադաստիարակել ժողովրդին: Կարծում եմ, որ գիտնականներ, մասնագետներ եւ հոգեվերլուծաբաններ պետք է Թուրքիա մեկնեն եւ բացատրեն, ուսուցանեն մեր հարցը: Համալսարաններում պետք է դասընթացներ հատկացվեն: Այս հանձնաժողովը միանգամայն միջոցներ է որոնելու Թուրքիայում հայկական հարցը բացատրելու համար: Որոշում ենք կայացրել ծրագիր մշակել եւ ներկայացնել զույգ պետություններին՝ Հայաստանին եւ Թուրքիային: Թեեւ խորհրդապահությամբ ձեռնարկեցինք գործը, սակայն այսուհետեւ դրական ծրագիր ենք մշակելու հայ-թուրքական հաշտեցման համար: Անշուշտ, այս բոլորը ժամանակի կարիք ունի:

– Այս ծրագիրը խիստ ծախսալից է, ֆինանսական մեծ միջոցներ են պետք. ո՞վ է հոգում այդ ամենը:

– Միջոցները հայթայթվում են տարբեր տեղերից: Նյութական մի շարք հատկացումներ գալիս են Մ. Նահանգներից: Կարեւորագույն աջակցությունը գալիս է Վիեննայի դիվանագիտական ակադեմիայից, որը քաջալերում է նման ծրագրերը: Ժնեւում եւս կա նմանօրինակ հատատություն:

– Մ. Նահանգների պետքարտուղարությունը կա՞ այս նախաձեռնության ետեւում:

– Չեմ կարող ասել, թե որքանպես տպել է մի գրություն, ըստ որի հաշտեցման այս հանձնաժողովը կվնասի Հայոց ցեղասպանության ճանաչմանը: Սակայն իրականությունը ճիշտ հակառակն է: Առաջին անգամ թուրքերն ընդունելու են Ցեղասպանությունը: Դրանից հետո աշխարհի մյուս պետությունների կողմից ճանաչումը դյուրին կլինի:

– Ղարաբաղի հարցը խոսակցության առարկա դարձա՞վ:

– Ոչ: Այդ հարցը սկզբում բերվեց, սակայն ես մերժեցի: Սա զուտ հայ-թուրքական խոսակցություն է լինելու:

– Հանձնաժողովը մնայո՞ւն հանգամանք է ունենալու:

– Առայժմ այո: Ժամանակի ընթացքում, երբ հաջողություն արձանագրենք, վստահաբար ուրիշներ եւս կարող են միանալ մեզ:

–Ժողովներին բացի հանձնաժողովի անդամներից, ուրիշներ ներկա գտնվեցի՞ն:

– Այո, մի շարք երկրների ներկայացուցիչներ՝ Շվեյցարիայից, Հոլանդիայից, Ֆրանսիայից ներկա գտնվեցին երկօրյա հանդիպմանը: Պատմության մեջ առաջին անգամ այս մակարդակով ու փորձառությամբ անձինք հանդիպում են: Եթե ամեն ինչ լավ ոգով ընթանա, հաշտեցման լավ ճանապարհ է բացվելու երկու ժողովուրդների առաջ: Քաջալերելու ենք, որ տարբեր բնագավառների ներկայացուցիչներ եւս ունենան նմանօրինակ հանդիպումներ: Բոլորս աշխատում ենք բարի կամք դրսեւորել: Գիտենք, որ հաշտեցումը գործընթաց է եւ ոչ առանձին դրվագ: Ժամանակ է պետք, բոլորս հասկանում ենք:

– Ըստ Ձեզ, ինչպիսի՞ն կլինի սփյուռքահայության կեցվածքը:

– Թուրքական կողմը միշտ էլ ձգտել է արտասահմանի հայերին չկապել Հայաստանի հարցերին:

– Խոսակցություն գնա՞ց հողային պահանջատիրության մասին:

– Բնականաբար, սակայն խոսակցությունը առավելաբար կենտրոնացավ անհատական բանկային հաշիվների եւ կալվածային իրավունքների վրա: Ապագայում մասնագետներ են գալու մասնակցելու այս հարցի ննջարկմանը: Կառավարություններին ներկայացվելիք հանձնարարությունների շարքում պետք է հիշել Հայաստանի շրջափակման պարագան, որը ներկայացվելու է շուտով: Այս բոլորի հետ կապված թուրքական կողմի ներկայացուցիչները բոլորն էլ ասացին, որ իրենց ազգային գիտակցությունը չի թույլատրում ընդունել, որ իրենց պետությունն այդքան վատ արարք է գործել: Նրանք ասացին, որ իրենք այլ կերպ են դաստիարակվել, հետեւաբար ոչ մի քաղաքական կամ պետական գործիչ երբեւիցե չի կարող ընդունել դա, քանի որ այն ազգային արժանապատվության հարց է: Մենք 3 սերունդ այլ ձեւով ենք դաստիարակված, ասացին: Նրանք բերեցին մի օրինակ, ըստ որի Թուրքիան բնավ ներողություն չի խնդրել որեւէ բանի համար: Իրենք բնավ չեն ընդունել, թե որեւիցե խնդիր ունեն: Օրինակ, իրենք ասում են «այսպես կոչված իրական հարց», «այսպես կոչված տնտեսական տագնապ» եւ այլն: Նմանապես՝ «այսպես կոչված ցեղասպանություն»: Բայց ինչո՞ւ եք իրար անցնում, ասում եմ նրանց: Մենք ամեն ինչ «այսպես կոչված ենք» անվանում, եւ ամեն ոք գիտի, թե ինչը նկատի ունենք: Այո, այս բոլորը հետաքրքրական են, եւ մենք նման բաների փորձառությունը ապրեցինք:

– Ի՞նչ սովորեցիք:

– Կա՛մ մի մեծ ոստյուն ենք կատարելու եւ կամ կորցնելու ենք մի մեծ պատեհություն երկար ժամանակի համար: Գլխավորը մարդկանց դիմելն է, որ առիթ տան այս պատեհությանը, նպաստեն դրա իրականացմանը:

Ադրբեջանում ԱՄՆ դեսպանի հակահայկական «առաքելությունը» բխում է Վաշինգտոնի հայկական քաղաքականության բնույթից

Սկիզբը էջ 1

Դեսպանատան այս արարքը որքան էլ ճշմարտությունը հայ հասարակությունից ողորկելու միտում ունենա, այնուամենայնիվ հայերի նյարդերն էր խնայում եւ դառնում էր ամերիկացիներին յուրահատուկ մարդասիրության դրսեւորում: Ուրեմն հակառակ Ադրբեջանում ամերիկյան դեսպանի հակահայկական «առաքելությանը», Հայաստանում ԱՄՆ-ի դեսպանատունը, ողորկելով պետդեպարտամենտի հաղորդագրության Հայաստանին ու արցախահայությանն առնչվող ագրեսորի եւ անջատողականի որակումները, համոզիչ կերպով ցույց է տալիս, որ իր առաքելությունն ավելի քան «մարդասիրական» է:

Սա հայ ժողովրդի նկատմամբ Հայաստանում ԱՄՆ դեսպանատան «մարդասիրական» առաքելությունից բխող բարեհաճ վերաբերմունքի արտահայտությունն է: Ի դեպ, քանի դեռ Խորհրդային Միությունը չէր փլուզվել, հայերի, Հայաստանի եւ Արցախի նկատմամբ պաշտոնական Վաշինգտոնի վերաբերմունքն էլ ավելի քան «բարեհաճ» էր: Դրա վառ ապացույցը 1988 թ. հուլիսին, ապա նաեւ 1989 թ. հուլիսին ԱՄՆ Կոնգրեսի, իսկ նույն թվականի նոյեմբերի 19-ին Կոնգրեսի եւ Ներկայացուցիչների պալատի ընդունած բանաձեւերն են:

Սրանցից առաջինով ԱՄՆ Կոնգրեսը կոչ էր անում խորհրդային կառավարությանը «հարգել Լեռնային Ղարաբաղի հայ ժողովրդի օրինական պահանջները», երկրորդով քաջալերում էր «Խորհրդային Միության նախագահ Գորբաչովին, որպեսզի նա լուրջ քննարկումներ անցկացնի Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ընտրած ներկայացուցիչների եւ Հայաստանի ժողովրդավարական շարժման ղեկավարության՝ ներառյալ վերջերս ազատ արձակված «Ղարաբաղ» կոմիտեի հետ, հայրենիքին վերամիավորվելու նրանց պահանջների առնչությամբ»:

Այլ կերպ՝ 1989 թ. հուլիսի բանաձեւով Կոնգրեսը պարզորոշ ընդունում էր Հայաստանին վերամիավորվելու Ղարաբաղի պահանջի արդարացիությունը՝ ընդունելով հանդերձ, որ Հայաստանը նաեւ արցախահայության հայրենիքն է:

Այս բանաձեւերից հատկանշականը երրորդն էր: ԱՄՆ Կոնգրեսի եւ Ներկայացուցիչների պալատի միաձայն ընդունած այս բանաձեւը ոչ միայն ճանաչում էր Ղարաբաղի հայ մեծամասնության ինքնորոշման իրավունքը, այլեւ Ղարաբաղն իբրեւ Ադրբեջանի բաղկացուցիչ մաս բոլորովին չէր դիտում, ընդհակառակը՝ նրանց միմյանցից պարզորոշ տարանջատում էր:

1991 թ. մայիսի 17-ին եւ հուլիսի 26-ին Կոնգրեսը նույնպես միաձայն ընդունեց հայերին խրախուսող եւս երկու բանաձեւ: Նույն թվականի հունիսի 13-ի բանաձեւով խրախուսելու հարցում Կոնգրեսին էր միացել Ներկայացուցիչների պալատը: Այս բանաձեւերում Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի շրջափակումները որպես «ուժի եւ շանտաժի դրսեւորում» ակնհայտորեն նույնացվում են բռնարարքների հետ:

Սակայն ԽՍՀՄ հոգեվարքի հետագա խորացման պայմաններում, երբ կանխորոշվեց նրա փլուզումը, ապարեզ իջավ պաշտոնական Վաշինգտոնը: 1991 թ. վերջերին Վաշինգտոնը սկսեց Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը պայմանավորել Թուրքիայի անմիջական միջնորդությամբ եւ Անդրկովկասում նրա միջոցով գործելու մղումով նրան որպես տնտեսական եւ քաղաքական մոդել առաջարկեց անդրկովկասյան հանրապետություններին: Այսինքն՝ թուրքական գործոնը ռուսականին հակադրելու հեռանկարը ստիպեց Վաշինգտոնին կտրականապես հրաժարվել ինչպես Հայաստանի, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի խրախուսումից:

Խրախուսման հարցում մինչեւ ԽՍՀՄ-ի փլուզումը Վաշինգտոնի որդեգրած դիրքորոշումը տրամագծորեն տարբերվում է փլուզումից հետո նրա որդեգրած դիրքորոշումից: Ուրեմն, նա խրախուսելով Հայաստանին ու Լեռնային Ղարաբաղին, ելնում է ոչ թե «հայ ժողովրդի օրինական պահանջներից», որոնք իրենց արտահայտությունն էին գտել Կոնգրեսի 1988 թ. հուլիսի բանաձեւում, այլ առաջնորդվում էր Խորհրդային Միության մեջ ազգային շարժումները հնարավորին չափ բորբոքելու նկրտումներով: Վաշինգտոնի դիրքորոշման փոփոխությանն արձագանքեց նաեւ ԱՄՆ Կոնգրեսը: 1992 թ. հունիսի 29-ին նրա ընդունած բանաձեւով Լեռնային Ղարաբաղը ճանաչվեց «ինքնավար շրջան», Ղարաբաղի հայությունը՝ Ադրբեջանի փոքրամասնություն, իսկ նրա ինքնորոշման իրավունքին փաստորեն եկավ փոխարինելու ադրբեջանական պետության տարածքային ամբողջականության իրավունքը: 1992 թ. հոկտեմբերի 24-ին այս բանաձեւն իր ստորագրությամբ վավերացրեց նախագահ Ջորջ Բուշ ավագը:

Ադրբեջանում ԱՄՆ դեսպան Ռոս Վիլսոնն արտահայտում է պետդեպարտամենտի տեսակետը, իսկ վերջինը՝ պաշտոնական Վաշինգտոնի: Եթե մենք ընդունենք, որ Վիլսոնի «առաքելությունը» Բխվում հակահայկական է, ապա Հայաստանն՝ ագրեսոր պետություն, իսկ Լեռնային Ղարաբաղի զինված ուժերը որպես անջատողականներ որակելու պետդեպարտամենտի մոտեցումը գնահատելիս ելակետ ենք ընդունելու Վաշինգտոնի հայկական քաղաքականությունը: Քանի որ այս քաղաքականությունը հայերի, Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի հարցերում համահունչ է Թուրքիայի քաղաքականությանը, որեմն դա էությամբ նույնքան հակահայկական է:

Թե ինչպե՞ս եղավ, որ մինչեւ ԽՍՀՄ-ի փլուզումն արցախյան ազգային-ազատագրական պայքարում հայերին քաջալերող ԱՄՆ-ը փլուզումից հետո սկսեց տրամագծորեն հակառակ դիրքերից հանդես գալ, կամ ի՞նչ նկրտումներով Հայաստանի, Հայոց ցեղասպանության եւ Ղարաբաղի հարցերում հանգեց թուրքական դիրքորոշումներին եւ ինչո՞ւ Հայաստանն ագրեսոր պետություն որակելու համար սպասեց հիվեսթյան բանակցություններին, սրանք առանձին հարցեր են, մասնավոր մոտեցում են պահանջում: Բայց որ հարցը Բխվում ԱՄՆ դեսպանի հակահայկական «առաքելությունը» չէ, այլ պաշտոնական Վաշինգտոնի քաղաքականության ակնհայտ հակահայկական բնույթը՝ կասկածից վեր է:

Արգելված «Առաքինություն» կուսակցությանը Թուրքիայում փոխարինեց «Երջանկություն» կուսակցությունը

Հուլիսի 22-ի որոշմամբ Թուրքիայի սահմանադրական դատարանն արգելել էր երկրում թուրք-իսլամականների քաղաքական կազմակերպության՝ «Առաքինություն» կուսակցության գործունեությունը: Ընդ որում, այդ որոշումով Թուրքիայի Ազգային մեծ ժողովում՝ Մեջլիսում նրա խմբակցության 102 անդամներից երկուսը զրկվել էին իրենց քաղաքական իրավունքներից, իսկ մնացածներն ինքնաբերաբար համալրել անկախական պատգամավորների շարքերը՝ համապատասխան կարգավիճակով:

Անկախականի կարգավիճակը, սակայն, չէր խանգարել, որպեսզի այլ կուսակցությունների պատգամավորներ, այդ թվում իշխող «Ճախ ժողովրդավարական», «Ազգայնական շարժում» եւ «Մայր հայրենիք» կուսակցություններից, միանան իսլամական պատգամավորներին, եւ նրանց թիվը 100-ից աճի 117-ի: Սա 550 տեղանոց Մեջլիսի համար պատկառելի թիվ է, ինչը քաղաքական նոր կազմակերպություն ձեւավորելու դեպքում գլխավոր ընդդիմության իրենց դերը երկրում վերականգնելու լայն հնարավորություն էր տալիս իսլամականներին: Այդ ընթացքում իսլամականներն այդ ուղղությամբ բուռն աշխատանքներ էին ծավալում:

Ըստ երեւույթին այդ աշխատանքներն ավարտվեցին հուլիսի 20-ին, երբ Թուրքիայի արդարադատության նախարարությունում Ռեջաի Քութանի նախագահությամբ գրանցվեց «Երջանկություն» կուսակցությունը՝ փոխարինելով արգելված «Առաքինություն» կուսակցությանը: Թվում էր, թե նորաստեղծ այս կուսակցության կազմում կընդգրկվեն այն բոլոր 117 պատգամավորները, որոնք սխիզված անցել էին անկախականի կարգավիճակի: Թուրք-իսլամականների բարենորոգչական թեւի կրավորական մոտեցումը ավանդաբաշ թեւին գերազանցեց բոլոր ենթադրությունները, այսպիսով «Երջանկություն» կուսակցությանն ընդամենը անդամակցեց 50 պատգամավոր: Ինչ վերաբերում է մյուսներին, ապա չի բացառվում, որ նրանք «Երջանկություն» կուսակցությանն այլընտրանքային մեկ այլ կուսակցություն կազմավորեն, եւ դրա արդյունքում թուրք-իսլամականների ավանդապաշ ու բարենորոգչական թեւերի անհաշտ պայքարը կվերաճի իսլամական երկու տարբեր կուսակցությունների պայքարի:

Կարեւորը, սակայն, ենթադրվող պայքարը չէ, այլ Թուրքիայում իսլամական ուժերի մասնատումը: Համենայն դեպս, ենթադրվում է, որ իսլամականների բարենորոգչական թեւը նոր կուսակցություն ձեւավորելու հարցում հակված է հետեւելու Եվրոպայի քրիստոնեա-դեմոկրատների օրինակին: Այս մոդելի կիրառումը Թուրքիայում նրանց կհաջողվի՞, թե՞ ոչ՝ ցույց կտա ժամանակը: Բայց որ հաջողման դեպքում Թուրքիայում կսկսի գործել իսլամ-դեմոկրատների քաղաքական նոր-աստեղծ կազմակերպությունը, եւ դա, որպես աննախադեպ երեւույթ իսլամական աշխարհում, ինքնին յուրօրինակ մոդել կհանդիսանա այդ աշխարհի համար, կասկածից վեր է:

ՀԱԿՈԲ ՉԱՔԲԱՏՅԱՆ

ՄՐՑԻՆ ԱՐԵՎԵԼՔ

Լիբանանյան «Ամալ» շարժումը եւ Ղաշնակցությունը փորձում են միացյալ ճակատ ձեւավորել

Լիբանանի արաբատառ «Ան Նահար» պարբերականը հուլիսի 21-ի համարում գրում է, որ շիա մահմեդականների «Ամալ» շարժումը, Լիբանանի ՀՅԴ-ն, ինչպես նաեւ Սիրիական ազգային սոցիալիստական Ղոզմի կուսակցությունը բանակցությունների ճանապարհով փորձում են ձեւավորել միացյալ ճակատ եւ Լիբանանի ներքաղաքական կյանքում հանդես գալ միասնաբար: «Ամալ» շարժման պատվիրակությունը՝ գլխավորությամբ բյուրոյի նախագահ, կառավարության նախարար Մուհամեդ Յուսեֆ Բեյդունի, Լիբանանի խորհրդարանի անդամներ Ալի Բազիի, Ալի Համդանի եւ Սալիմ ալ Խալիլի, օրերս այցելել են Սիրիական ազգային սոցիալիստական կուսակցություն եւ ՀՅԴ կենտրոնական գրասենյակներ: Հիշեցնենք, որ «Ամալը» Լիբանանի շիա մահմեդականների շարժում է, ձեւավորվել է քաղաքացիական պատերազմի տարիներին, շարժման հիմնադիրը կրոնական առաջնորդ իմամ Մուսա Սադրն է: Այսօր «Ամալի» առաջնորդը Լիբանանի խորհրդարանի նախագահ Նաբիհ Բերրին է, որի առաջարկությամբ է ձեւավորվում եռակողմ ճակատը:

«Ան Նահար»-ը գրում է, որ Բուրջ Համուդում «Ամալի» պատվիրակությանը ընդունել են ՀՅԴ կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Հովիկ Մխիթարյանը եւ ԿԿ այլ անդամներ: Յուսեֆ Բեյդունն ասել է, որ ձեւավորվող ճակատն ուղղված չէ որեւէ քաղաքական խմբավորման դեմ, այլ միայն նպատակ ունի Լիբանանի մի շարք կուսակցություններ միավորել մեկ միասնական ճակատում: Հանդիպումից հետո Մխիթարյանն ասել է, որ ՀՅԴ-ն եւ «Ամալը» արդեն երկար ժամանակ պահպանում են «հատուկ հարաբերություններ»:

Իրանահայ է ինքնասպան եղել

Ամսանում լույս տեսնող անգլիատառ «Զորդան թայմս» օրաթերթը հուլիսի 23-ի համարում գրում է, որ կիրակի Բաղդադի Զաբալ Հուսեյն թաղամասում ինքնասպան է եղել «Ֆրանկ Ս.» անունով 26-ամյա մի երիտասարդ: Պաշտոնական աղբյուրները նշել են, թե երիտասարդը գործազուրկ է եղել, տառապել հոգեկան հիվանդությամբ: Նրան գտել են իր իսկ վարձած բնակարանում՝ կախված:

«Զորդան թայմսը» գրում է, որ զոհը հայազգի է, բարեկամների ասելով՝ եղել է ուժեղ դեպրեսիայի մեջ՝ աշխատանք եւ փող չունենալու պատճառով:

Կիոտոյի արձանագրությունը կարող է գործել 2002 թ.

Բոնի հանդիպումի հաջողությունը

Բոննում հուլիսի 23-ին ավարտվեց 180 պետությունների շրջակա միջավայրի նախարարների խորհրդաժողովը, որտեղ քննարկվում էր թունավոր գազերի արտանետումների կրճատմանը վերաբերող Կիոտոյի 1997 թ. արձանագրության հարցը: 4-օրյա բուռն քննարկումներից եւ 2 անքուն գիշերներից հետո հանդիպման մասնակիցներն ի վերջո հասան դրական արդյունքի: «Լիբերասիոն» թերթը հիշեցնում է, որ անցյալ տարվա նոյեմբերին Հաագայում անցկացված համանման խորհրդաժողովն ավարտվել էր անարդյունք: Բոննում նախագահում էր Հոլանդիայի շրջակա միջավայրի նախարար Յան Պրոնկը: Երկուշաբթի առավոտյան ժամը 4-ին սկսված նիստը նա փորձեց ավարտել ժամը 10-ին եւ ներկաներին առաջարկեց հստակորեն իրենց դրական կամ բացասական կարծիքն արտահայտել ջերմոցային էֆեկտ առաջացնող թունավոր գազերի արտանետումների կրճատման վերաբերյալ: Ներկայացված բանաձեւը Կիոտոյի արձանագրության փոքր-ինչ փոփոխված եւ սրբագրված տարբերակն էր: Զարգացող երկրները ներկայացնող «77-ի խմբի» ներկայացուցիչները, Ճապոնիան, Եվրամիությունը, Արեւելյան Եվրոպայի պետությունները, Կանադան, Ավստրալիան, Նոր Զելանդիան եւ ապա Ռուսաստանը հավանություն տվեցին բանաձեւին, միաժամանակ ընդգծելով, որ այն լիովին չի բավարարում իրենց: Դրանով Կիոտոյի արձանագրությունը կյանքի կոչվեց եւ կարող է ուժի մեջ մտնել արդեն 2002 թ.: Փաստաթղթի օգտին քվեարկած պետություններն արտանետում են ջերմոցային էֆեկտ առաջացնող թունավոր գազերի ընդհանուր ծավալի ավելի քան 55 տոկոսը, ինչը Կիոտոյի արձանագրության ընդունման կարեւոր նախապայմաններից մեկն էր: Այս նախապայմանը (55-ից ավելի «այո») լայնորեն գերազանցվեց:

Ներկաները քվեարկության արդյունքներն ընդունեցին բուռն ծափահարություններով: Փաստաթուղթն ընդունվեց ի հեճուկս ԱՄՆ-ի վարչակազմի ընդդիմագործության: Խորհրդաժողովի մասնակիցները սուլոցներով ընդունեցին ԱՄՆ-ի ներկայացուցիչ Փոլա Դոբրիանսկու այն հայտարարությունը, թե իր երկիրը «շատ լուրջ է վերաբերվում մոլորակի կլիմայի փոփոխման դեմ մղվող պայքարին»: Եվրամիության անունից հանդես եկող Բելգիայի շրջակա միջավայրի նախարար Օլիվիե Դելյոզը հայտարարեց, որ Եվրամիությունը, Կանադան, Իսլանդիան, Նոր Զելանդիան, Նորվեգիան եւ Շվեյցարիան պատրաստ են 2005 թվականից զարգացող պետություններին տարեկան 450 մլն եվրո օգնություն հատկացնել կլիմայի աննպաստ փոփոխությունների դեմ պայքարելու համար:

Պ. Ք.

«Շարոնը երազում է 1967 թվականի կրկնությունը»

ԿԱՅԻՐԵ, 24 ՀՈՒԼԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Իսրայելի վարչապետ Արիել Շարոնը մտադիր է կրկնել այսպես կոչված «Մոշե Դայանի պլանը», որին համապատասխան 1967 թվականի հունիսին իսրայելական զորքերն օկուպացրին Հորդանան գետի արեւմտյան ափը եւ Գազայի հատվածը: Այդ մասին այսօր հայտարարել է ՖԱԹՀ պաղեստինյան կազմակերպության՝ Հորդանանի արեւմտյան ափի բաժանմունքի ղեկավար Հուսեյն աբ Շեյխը:

Նա նշել է, որ Ջենին-Թուլկարմ գծում իսրայելական զորքերի ներկայիս կենտրոնացումը մանրամասներով հիշեցնում է Իսրայելի պաշտպանության նախկին նախարար Մոշե Դայանի գործողությունները 1967 թվականի հունիսյան պատերազմի ժամանակ:

«Իսրայելացիները, որոնց զինանոցում կան տանկեր, զրահափոխադրիչներ եւ ծանր հրետանի, ներկայումս շրջափակում են պաղեստինյան բոլոր քաղաքները»,-նշել է աբ Շեյխը: «Շարոնը երազում է 1967 թվականի կրկնությունը», ասել է նա:

Պատերազմի պատրաստ ժողովուրդն իր զինվորին չի բանտարկում

Սկիզբը էջ 1

Ղարաբաղի պատերազմի ադրբեջանցի վետերանների դասավճիռը միակ դեպքը չէ, որ ցույց է տալիս Ադրբեջանի՝ ԼՂՀ-ի դեմ նոր պատերազմ սկսելու «պատրաստվածությունը»: Ադրբեջանցի ժողովուրդը, որի ձեւավորումը սկսվել է շուրջ հարյուր տարի առաջ, պատերազմի պատրաստ չէ առաջին հերթին հոգեբանորեն: Տասնամյակներ են պետք, որպեսզի ղարաբաղյան պատերազմի «համուհոսը» ճաշակած ժողովուրդը ենթագիտակցորեն պատրաստ լինի պատերազմի, առավել եւս, երբ խոսքը ղարաբաղցիների դեմ կռվելուն է վերաբերում:

Հարց է առաջանում. եթե Բաքուն պատրաստ չէ պատերազմի, ինչո՞ւ է ամենաստարբեր մակարդակներով, ընդհուպ՝ նախագահ Հ. Ալիեւի, Լեռնային Ղարաբաղի դեմ «հակաահաբեկչական գործողություններ» հրահրելու կոչեր անում, ինչո՞ւ է ադրբեջանական բազմագույն մամուլը հայերի դեմ նոր պատերազմ հրահրելու հարցում այդպես համախմբված: Նախ բարգմանաբար ներկայացնենք Բաքվում լույս տեսնող «525 գազեթ» պարբերականի հուլիսի 18-ի «Հայաստանի հետ տարածքների փոխանակման դրական ասպեկտները» վերլուծականից մի հատված. «Այն փաստը, որ ԵԱՀԿ ՄԽ համանախագահները տարածաշրջան կատարած վերջին այցելությունը սկսեցին ՀՀ պատշգամբյան նախարար Սերժ Սարգսյանի հետ հանդիպումով, ապա Բաքվում մտքեր փոխանակեցին Սաֆար Աբիեւի հետ, ինչպես նաեւ նկատի առնելով միջնորդների համատեղ հայտարարությունը, ցույց է տալիս, որ նրանք բանական գործողությունները վերսկսվելուց լուրջ մտահոգություններ ունեն: Սա նշանակում է, որ «հակաահաբեկչական գործողություններ» սկսելու պրոպագանդան, որ ակտիվորեն պատշգամբվում է ադրբեջանական մամուլի կողմից, արդյունավետ է: Այս փաստը մեկ անգամ եւս հաստատում է, որ ընտրված գործելաոճը ճիշտ է ու պետք է շարունակվի»: Թերթը մոռանում է, գուցե գիտակցաբար, հարցնել. ԼՂ-ի դեմ «հակաահաբեկչական գործողություններ» սկսելուց ինչո՞ւ են միջնորդները մտահոգված, եւ ի՞նչ էին անում միջնորդները 1991-94 թթ.: «Հակաահաբեկչական գործողությունները» առաջին հերթին մտահոգում են ադրբեջանցիներին, որովհետեւ նոր պատերազմ հրահրելու պարագայում պատշգամբյան Բաքուն ինքնին զգալով նախորդ պատերազմի համը՝ իր զինվորին ճակատ ուղարկելու խնդիր է ունենալու:

Ադրբեջանական իշխանությունները ռազմատենչ հայտարարություններով հետապնդում են նաեւ ներքաղաքական նպատակներ, իշխանությունները, ի դեմս Հ. Ալիեւի, պետք է ընդդիմությանը ցույց տան, որ չեն խուսափում ԼՂ հարցը ռազմական եղանակով լուծելու տարբերակից, ընդդիմության համար Ղարաբաղի հարցը դիվիդենտ է, հատկապես ընտրություններից առաջ: Ադրբեջանում ով Ղարաբաղի համար բարձր է բղավում, նրա ընտրվելու հնարավորություններն առավել մեծ են: Բացի այդ, Ղարաբաղն ադրբեջանցիների համար «արժանապատվության» հարց է: Նույնը նաեւ մամուլին է վերաբերում: Օրինակ, Բաքվում կայացած հայ, թուրք եւ ադրբեջանցի լրագրողների հանդիպման ընթացքում «Զերկալո» թերթի խմբագիրն ասաց, որ իր որդին 16 տարեկան է, եւ որ չի ուզում զավակին տեսնել պատերազմի դաշտում: Ելույթի հաջորդ օրվանից սկսած «խաղաղասեր» խմբագիրն ամեն օր թերթի էջերում պատերազմ սկսելու անհրաժեշտությունն է շեփորահարում: Այսպես են ադրբեջանական մյուս թերթերի խմբագիրները եւս: Մտերմիկ զրույցներում նրանք խոստովանում են, որ զենք չեն վերցնի, սակայն մամուլում պատերազմի կոչերով փորձում են հասարակական կարծիք ձեւավորել: Ադրբեջանցի լրագրողի համար եւս Ղարաբաղը «արժանապատվության» հարց է:

Ընդհանրապես, Ադրբեջանը տառապում է, պայմանականորեն ասենք, «հայկական հիվանդությամբ»: Արհեստականորեն ձեւավորված եւ երիտասարդ ժողովուրդը, չունենալով անցյալ, իր գիտակցության մեջ հային պատկերացնում է որպես 1915 թ. Ցեղասպանության զոհ: Նաեւ այդ է պատճառը, որ Ադրբեջանի ռազմատենչ հայտարարություններին հայկական կողմի ցանկացած պատասխան ընկալվում է ջղաձգությամբ: Վարդան Օսկանյանն օրերս հայտարարեց. «Մենք մերժել եւ մերժում ենք ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառումը: Սակայն ցանկանում ենք վստահեցնել, որ ցանկացած ոտնձգություն կստանա արժանի պատասխան»: Ադրբեջանական մամուլն Օսկանյանի հայտարարությունը որակեց մեկ ընդհանուր բառով՝ ցինիկ, իսկ ԱԳ նախկին նախարար Զուլֆուգարովը հիշեցրեց. «Ադրբեջանն այսօր այն չէ, ինչպիսին նախկինում էր, եւ դժվար թե լինի այնպիսին, ինչպիսին ցանկանում է տեսնել Օսկանյանը»: Մեր կարծիքով՝ ճիշտ կլիներ, որ պաշտոնական Ստեփանակերտը ինչ-որ ձեւերով հասկացներ Բաքվին, որ իրոք կստանա արժանի պատասխան, եթե շարունակի հիստերիկ ռազմատենչ հայտարարությունները:

Եթե հիշում եք, համանախագահների հանդիպմանը Ադրբեջանի քիվ 1 զինվոր Հեյդար Ալիեւը պատմել էր Բաքվի պուրակում իր եւ մի շուշեցի փախստականի զրույցը. վերջինս Ալիեւին ասել էր՝ եթե Շուշին ազատագրվի, ինքը Շուշիում նախագահին խորոված կհյուրասիրի: Պատահական չէ, որ պուրակում Ալիեւը հենց շուշեցի խորոված վարպետի է հանդիպել, այլ ոչ թե, ասենք, զանգելանցի կամ ֆելբաջարցի: Բաքվի խորոված ճաշակողների մեծ մասը նախկին շուշեցիների սերունդն է, մինչդեռ օրինակ ավտոկանգառների վերահսկողության մենաշնորհը զանգելանցիներինն է եւ այլն: Ոչ մի նախկին շուշեցի, զանգելանցի չի թողնի Բաքուն, առավել եւս մայրաքաղաքի իր խորոված ճաշակը կամ ավտոկանգառը եւ վերադառնա «հայրական տուն», ուր մնաց զենք վերցնի: Ադրբեջանցիներն, իրոք, առեւտրական ժողովուրդ են, որ երբեմն երգիչներ են ծնում: Իսկ եթե Ալիեւը ցանկություն ունի Շուշվա խորոված ճաշակել, խնդիր չէ: Պարզապես խորոված անողը հայ է լինելու: Համի մասին խոսք չկա՝ Ալիեւին թող համանախագահներն ասեն:

Մշակույթ

Երկրագիտական թանգարանը ոչ միայն մշակութային-լուսավորչական, այլեւ գիտահետազոտական օջախ է

Այսպես է նշանավորում Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարանը տնօրեն Անահիտ Խալաթյանը:

30-ական թթ.-ից Ղարաքիլիսան վերածվել էր շինարարական մեծ հրապարակի: Այստեղ, հնագիտական հուշարձաններով հարուստ տարածքներում, մասնավորապես Մաշտոցի բլուրում, Թագավորանիստում, Դիմացում պեղումների ժամանակ երեւան եկան բազում յուրատիպ բնակատեղիներ եւ դամբարաններ: Պեղումների եւ հետագայում գիտական աշխատանքներում մեծ եւ անուրանալի դեր ունեցավ հուշարձանների պահպանության կոմիտեի աշխատակից, փորձառու հնագետ Եղիա Մոմջյանը, որի ջանադիր գործունեության արդյունքում հայտնաբերված հնագիտական հարուստ հավաքածոն կենտրոնացվեց Ս. Աստվածածին եկեղեցում: Այդպես հիմք դրվեց Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարանի: Այսօր թանգարանի ֆոնդային ցուցանմուշների թիվը հասնում է 32000-ի, որոնք զետեղված են հիմնականում հնագիտության, ազգագրության եւ նորագույն պատմության բաժիններում:

Տասնյակ տարիների ընթացքում գիտամշակութային այս օջախն աստիճանաբար դարձել է հնարավորինս եռանդուն կյանքով՝ հանդիսանալով թե համաքաղաքացիների, թե քաղաքի հյուրերի համար ուշագրավ այցելատեղի: Թանգարանի գործունեության հիմնական ոլորտներից առավել հիշարժան են ՀՀ ԳԱԱ-ի հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի հետ համագործակցությունը եւ պատեհ առիթներով վերջինիս ֆոնդային նյութեր տրամադրելը, ՀՀ քաղաքաշինության նախարարության գեոդեզիայի եւ քարտեզագրության ինստիտուտի հանձնարարությամբ Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անունների պետական կատալոգի համար անհրաժեշտ տեղեկատվության (մարզի ծիրով) ձեռք բերելը, թանգարանի արխիվային նյութերի դասակարգումն ու մշակումը, նորագույն պատմության բաժինը նոր նյութերով աղահովելը, մարզային ռադիոյով, հանրապետության հեռուստատեսությամբ պարբերաբար թեմատիկ հաղորդումներով, ինչպես եւ մամուլում հոդվածներով հանդես գալը, միջին եւ բարձր դասարանցիների նաեւ ուսանողության համար դաս-էքսկուրսիաներ անցկացնելը, քաղաքի այլազան տոնակատարություններին մասնակցելը (ազգագրական-ցուցադրական նպատակով):

Արժեքավոր իրագործումներից է նաեւ «Լոռին որպես նախնադարյան հասարակության բնօրրան» գիտացուցադրական թեմատիկ պլանի մշակումը:

Այսպես է գործել եւ այժմ գործում է հիշյալ օջախը, ինչը դժվար է ներդաշնակվում թանգարանի ներկայիս արտաքին վիճակին եւ դրա աշխատանքային պայմաններին: Երկրաշարժից հետո Երկրագիտական թանգարանը ծվարել է քաղաքի Երկաթուղայինների այգում, ռուսական եկեղեցու պատերի տակ, փոքրիկ-նեղլիկ տնակներում: Փաստորեն թանգարանը զրկված է պատշաճ ազգային արժեքների պահպանման եւ աղահովման հիմնական երաշխիքից՝ շենքային համապատասխան տարածքից իր անհրաժեշտ եւ բազում պայմանների համալիրով: Բացակայում են նաեւ ֆոնդային եւ ցուցադրական նմուշների համար պիտանի կահույքը, կանոնավոր չի մատակարարվում էլեկտրաէներգիան, չկան թանգարանի գիտահետազոտական, գործավարական առօրյա աշխատանքները վարելու ամենատարրական, առաջին գործածության իրեր, պիտույքներ:

Բացի այդ, երկրագիտական թանգարանի աշխարհագրական «կենսագրությունն» իրավամբ զարմանք է պատճառում. տարիների ընթացքում այս երեւելի գիտամշակութային օջախը դեգերել է այս եւ այլուր՝ Ս. Աստվածածին եկեղեցի, շուկայի տարածք, մշակույթի տուն, «Հայաստան» առողջարանի մասնաշենք, Բաթումի փող. թիվ 9 շենք, «Մանուշակ» ռեստորանի սրահ (անգամ), ռուսական եկեղեցու տարածք... Բնական է, որ նման անգութ ոդիսականի ընթացքում թանգարանային շատ նմուշներ վնասվել-հասել են խիստ անմխիթար վիճակի եւ անհետաձգելիորեն կարոտ են վերականգնողական աշխատանքների:



Խնձորուտ թաղամաս

Հարց է առաջանում. ինչպե՞ս, ի՞նչ եղանակով են կարողանում նման պայմաններում կանոնավոր, կարգապահորեն (սեփական աչքով համոզվեցի) աշխատել եւ «պահել» թանգարանը նրա նվիրյալները՝ տնօրենը, փոքրիկ աշխատակազմը: Պատասխանը միանշանակ է. էնտուզիազմով, մարդկանց՝ սեփական քաղաքի համար կարեւոր գործ անելու արդար գիտակցությամբ: Իսկ որտեղի՞ց են հայթայթում նյութական միջոցները: «Հովանավորչական եւ սեփական աղբյուրներից, ասում է տնօրեն Անահիտ Խալաթյանը, մեր հիմնախնդիրների լուծման համար դիմել ենք ՀՀ մշակույթի վերջին նախարարներին, նաեւ՝ Աժ պատգամավոր Մարտուն Մաթեւոսյանին, նաեւ՝ Վանաձորի կողմից ընտրված Աժ պատգամավոր Արամ Մանուկյանին, նաեւ՝ տեղի իշխանությանը: Վերջիններս թանգարանի պատմության մեջ առաջին անգամ արտացավորեն արձագանքեցին: Ներկայիս մարզպետ Հենրիկ Քոչինյանը հատուկ խորհրդակցություն հրավիրեց, իսկ քաղաքապետ Սամվել Դարբինյանի մակարդակով որոշում կայացվեց հատկացնել շենքային տարածք»:

Մենք ուրախությամբ ենք արձանագրում այս լուրը, եւ թանգարանի ու բոլոր վանաձորցիների հետ հույս փայլուն ուսում ստացած, ժամանակին Արշակ Չոպանյանի եւ հայտնի շուտերագետ Հիլեր դը Բարանտոյի խրախուսանքին արժանացած, ապա հայրենանվեր ոգորումներով Հայաստանում բնակություն հաստատած եւ ամբողջ կյանքը հայրենիքի պատմամշակութային բնագավառին ծառայեցրած երախտավոր Եղիա Մոմջյանի գիտական ժառանգությանը եւ նրա շիրիմին... Նրա անտիպ արժեքավոր ձեռագրերը այսօր չունեն հաստատ եւ մասնված են բախտի քմահաճույքին: Իսկ գերեզմանը զուրկ է շիրմաքարից, պատված է անհիշատակ ու կորած շիրմաքմբով...

Համոզված ենք, որ տարիների նման աննահանդուրժելի եղելությունը վերջ ի վերջո պետք է ունենա իր շուտափույթ վախճանը: Չի ինչպե՞ս առաջ քայլել, եթե չես ճանաչում եւ հարգում սեփական անցյալը: Իսկ պատվարժանորեն հիշելը հարգանքի տուրք է նաեւ մարդուն եւ նրա՝ ամենքիս համար կարեւոր գործին:

Վահե Շահվերդյանը «սնուցելու է» Վանաձորի թատրոնը պրոֆեսիոնալ կադրերով

Սա առերեւույթ եւ այլեւս անհետաձգելի անհրաժեշտություն է, համոզված է Վանաձորի Հովհաննես Աբելյանի անվան թատրոնի տնօրեն, դրամատուրգ Սամվել Խալաթյանը:

Ծանոթանալով թատրոնի ներկայիս գեղարվեստական նկարագրին՝ համոզվում ես ասածի ճշմարտության մեջ: Նկարագիր, որ շատ ավելի պրոֆեսիոնալ եւ կարող պետք է լիներ, եթե... եթե Վ. Շահվերդյանի Սունդուկյանի անվան մայր թատրոնում գլխավոր ռեժիսոր նշանակվելուն պես Աբելյանի թատրոնը նրա հետեւողությամբ չլիներ չորս առաջատար դերասաններ: Եթե չլիներ արտագաղթը: Իսկ այն իր ծիրաններում ընչահեղձ է անում մարզերի նաեւ մշակութային կյանքը: Սամվել Խալաթյանը դիտարկում է. «Ոչ միայն արտագաղթի, այլեւ այսպիսի ներգաղթի պատճառով հնարավոր չէ լրացնել հանդիսատեսի քանակը»: Նա նկատի ունի, որ ներգաղթողները (Բաքվից, Կիրովաբադից եւ այլ) անճանաչ են գրական մայրենիին, խոսում, հաղորդակցվում են բարբառային իրենց տարբերակներով եւ գերազանցապես ռուսերեն: «Մեր թատրոնի լեզուն նրանց համար հիմնականում անհասկանալի է եւ այդ իսկ պատճառով պակաս հետաքրքրաշարժ»: Բացի այդ, մտորում է դրամատիկականի տնօրենը, համոզված եմ, որ ժամանակն է ի վերջո բարեփոխելու թատրոնի խաղացանկային քաղաքականությունը հոգուս ժամանակակից, առավել այժմեական գործերի»: Այդպես է, մանավանդ եթե նկատի ունենանք հենց խնդրո առարկա թատրոնը: Անդերսենի «Խոզաքաջը», Լեսլի Ռիչարդսոնի «Անտառի զավակները» (մանկական ներկայացումներ), Շտոկի «Եվ արարվեց թամաշան», Անահիտ Աղասարյանի «Անառակ հոր վերադարձը», Սամվել Խալաթյանի «40 օր համբառնալուց առաջ»-ը, Ժիրայր Անանյանի «Կարուսել»-ը, հենց վերջերս բեմադրված (մարզպետի հովանավորությամբ) Հրանտ Մաթեւոսյանի «Աշնան արեւը»... Արդյոք (որոշ բացառությամբ) ներկայանալի եւ պրոֆեսիոնալ առումով ճի՞շտ ընտրված խաղացանկ է սա...

Ընդամենը 2 տարվա տնօրենն ուշադրություն հրավիրում է այն աղետալի փաստին, որ ժամանակին լավ ավանդույթներ ունեցող այս թատրոնն այժմ ռեժիսոր չունի (ամեն անգամ հրավիրում են տարբեր բեմադրիչների):

Բացի այդ՝ թատրոնում մնացե՞լ է 27 դերասան: Եվ լուրջ խաղացանկ, լուրջ սպասելիքնե՞ր ունենանք: Սակայն, թվում է, գտնվել է ելքը: Ինչպես հայտնեց Սամվել Խալաթյանը, Վահե Շահվերդյանը դերասանական կուրս է հավաքագրում թատերական ինստիտուտում, որի կազմում 90 տղան պետք է լինեն վանաձորցիներ, պայմանով, որ ավարտելով բուհը անմիջապես վերադառնան Վանաձոր՝ լծվելու Աբելյանի անվան թատրոնի աշխատանքներին:

«Իսկ այժմ թատրոնը կիսամեռ վիճակում է եւ գտնվում է «վերակենդանացման բաժնում», հաստատում է Ս. Խալաթյանը: Ձնելով շենքը, պարզ է դառնում, որ վաթար վիճակը ոչ միայն գեղարվեստական ոլորտին է վերաբերում: Շենքը 30 տարի չի վերանորոգվել, գոյացել է ծախսած էլեկտրաէներգիայի դիմաց մուծման կես միլիոն դրամի պարտք, չափազանց խղճուկ ու հնաոճ են թատրոնի հանդերձարանը, ռեվիզիտը, դեկորները... «Մեզ հնարավորինս օգնում է մեր մարզպետը՝ իր հովանավորությամբ», երախտագիտությամբ նշում է Սամվել Խալաթյանը, բայց ընդհանուր առմամբ այն տպավորությունն է, որ մեր երկրում մշակույթը դարձել է կցորդ»:

Այս տարի լրանում են Վանաձորի Աբելյանի ավան թատրոնի 70-ամյակը եւ ՀՀ ժողովրդական արտիստուհի, հիշյալ օջախի հիմնադրուն դերասանուհի Լենա Փաշինյանի ծննդյան 70-ամյակը: Եվ տնօրենը մտահոգվում է. «Ինչպե՞ս ենք նշելու այդ՝ մեզ համար կարեւոր, իրադարձային միջոցառումները»: Աբելյանի թատրոնի մասին ցայսօր չի ստեղծվել եւ ոչ մի գիրք՝ վավերագրող նրա ներկայանալի ստեղծագործական ուղին եւ ժամանակի դեմքը: Գուցե հոբելյանի առիթո՞վ կմտահոգվեն համապատասխան օղակները... Եվ միգուցե կիրականանա՞ Սամվել Խալաթյանի արդար մտահոգությունը՝ թատրոնի շքամուտքի աջակողմյան հատվածում հուշատախտակին սեղագրել նրա երախտավորների անունները... Մեզ համար եւ գալիք սերնդի:

Հեքիաթը բեմում եւ ճեմասրահում

Այս տպավորությունների բեռով անցնում էի փողոցով, երբ հանկարծ շենքերից մեկի լայնանիստ ցուցափեղկից ինձ ժպտաց ծանոթ ու կորուսյալ մի աշխարհ: Մանկության աշխարհը: Ծիտ ու ծաղիկ, ծիլ ու առվակ, ծիծաղկոտ արեւ... Լսեցի անգամ, թե ինչպես են թրթռում թեւիկները թիթեռնիկի... Տիկնիկային թատրոնն էր:

Հաջողությամբ բեմադրություններ է ներկայացնում իր մշտական, խստապահանջ հանդիսատեսին: Իսկ տնօրեն եւ գեղարվեստական ղեկավար Սերգեյ Մելիքյանը, որին երեխաները լավ ճանաչում են եւ սիրալիր ու միաբերան Սերգեյ պապիկ են կոչում, մտահոգել է իր թատրոնում թագադրել նորին մեծություն հեքիաթը ոչ միայն բեմում, այլեւ ճեմասրահում: Եվ սեփական շնորհաշատ ձեռքերով զարդարել է ամբողջ ճեմասրահը զանազան նյութերից պատրաստված հեքիաթային բնաշխարհով:

Ուրախ են երեխաները, որ հեքիաթն իրենց համար շարունակվում է նաեւ այստեղ: Եվ ժպտում ենք մեծերս՝ մեր կյանքի հազվադեպ ժպիտով՝ անցնելով թատրոնի կողով եւ հասցնելով այդ պահին «քաղել» ու տանել մեզ հետ մեր հարազատ ու կորուսյալ մանկության աշխարհից մի լուսավոր ծվեն...

Ստեփան Զորյանի գրադարանի աղջիկն իր նախատիպն ունի

Դա Վիկտորյան է՝ «Գրադարանի աղջիկը» հանրահայտ պատմվածքի հերոսուհին: Իսկ նախատիպը դեռեւս 1917 թ. Ղարաքիլիսայում սկիզբ առած գրադարանի անխոնջ աշխատակից Վերգինե Մխիթարյանն է: Ինչպես համոզվեցի Լոռու մարզի հանրապետական գրադարան այցելությունիցս՝ չէր սխալվել գրողն իր հերոսուհու իրական նախատիպը գտնելով-գտնելով այս օջախում, ուր ճիշտ սերնդափոխություն է կատարվում:

Գրադարանը ցայսօր պահպանել է տարիների իր ավանդույթները. 1975-ից հարմարավետորեն տեղավորված է ներկայիս շենքում: Նրա մատենագիտության, տեղեկատվական, մեթոդական, մամուլի, մանկական գրքերի, կոմպլեկտավորման ու մշակման, արվեստի, տեսալսողական, վերջերս բացված անգլիական գրականության բաժիններում, մայր գրադարանում եւ ընթերցասրահներում աշխատում են բանիմաց մասնագետներ: Տնօրեն Լաերտ Մկրտչյանի եւ փոխտնօրեն Ֆ. Ջանջուղազյանի ջանքերով ստեղծված են ուշահարույց թեմատիկ ստենդներ՝ մշտական եւ ժամանակավոր: Գրադարանը, որ պարունակում է շուրջ 368.400 ֆոնդային նմուշ գիրք (1999 թ.-ի տվյալներով) բազում այցելուներ ուներ, որոնց հիմնական զանգվածը Վանաձորի պետական եւ ոչ պետական կարգավիճակի բուհերի ուսանողությունն է: Գրադարանի աշխատակազմն ըստ էության ոչ միայն սոսկ այցելուներին սպասար-

Մշակույթ

Երկան եւ սպասելիքներ

կող օղակ է, այլեւ որոշակի գիտական ներդրում ունի հանրաթեսության մասնաբով գրադարանավարական ոլորտում: Այսպես, փոխնախարեն Ֆ. Զանջուղազյանը եւ աշխատակից Լ. Այվազյանը հաղթող են ճանաչվել 1999-ին Սորոսի հիմնադրամի հովանավորությամբ անցկացրած «Գրադարանների հավաքածուների նպատակային համալրում տեղեկատու մասնագիտական գրականությամբ» ծրագրերի հանրաթեսական մրցույթում:

Մրցանակը յուրովի էր. 5000 դոլարի ընդհանուր արժողությամբ մասնագիտական գրականություն գրադարանի համար: Գրադարանը մասնակցում է նաեւ «Եվրասիա» հիմնադրամի կազմակերպած «Գրադարանները որպես հաղորդակցության կամ» խորագրով մրցույթին:

Այս մշակութային օջախի կենսագրության մեջ հիշարժան են նաեւ երկու այլ փաստեր. 2000 թ. Լոռու մարզի գրադարան այցելեց ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի դեսպան Թիմոթի Զոնսը, որը 100 անուն գեղարվեստական գիրք նվիրեց համաշխարհային դասականներից անգլերեն լեզվով: Ես տեսա նաեւ անգլիալեզու հրատարակությամբ հիանալի մեկ այլ հավաքածու՝ դասական եւ արդի ռուս, արեւմտաեվրոպական եւ ամերիկյան գրականության լավագույն նմուշներ շուրջ 4000 դոլար արժողությամբ, որոնք գրադարանին է ընծայել ամերիկացի գիտնական, պրոֆեսոր Դենի Բաթֆիլդը:

Եվ այսպանից հետո լսեցի փոխնախարեն ափսոսանքով լի խոսքը. «Իսկ հայրենյաց մամուլի համար փող չունենք, թերթերից, ամսագրերից խեղճ ենք: Մշակույթի նախարարությունն այդ նպատակի համար գումար չի տրամադրում, նախկինում քաղաքաշինության օժանդակությամբ բաժանորդագրվել էինք, իսկ այս տարի՝ ոչ»:

Չնայած անմիջապես տեղում հայտնեցի գրադարանի տնօրինությանն «Ազգ» օրաթերթի խմբագրության՝ մարզային գրադարաններին թերթի մեկական օրինակ անվճար տրամադրելու պատրաստակամությունը («Հայմամուլին» համապատասխան գրություն հղելուց հետո), արդ կրկին ուզում եմ հիշեցնել նման հնարավորության մասին:

...Կարծում եմ, սխալված չեմ լինի ասելու, որ Ստեփան Զորյանի գրադարանի աղջկա նախաձիրը կար եւ այսօր էլ կա ոչ միայն հիշյալ, այլեւ մարզերում գործող 146 գրադարաններից շատերում: Եվ ցանկալի է, որ բոլոր գրադարանները (110-ը գյուղերում են) հավուր պատշաճի արժանացած լինեն պետական հոգատարությանը:

Աշխատանքներ, որ պատիվ կբերեն ամեն մի քաղաքակիրթ ազգի

Որքա՞ն ուրախ եմ, որ այցելեցի ձեր հիասքանչ օջախը, սիրելի ու լուսեղեն մանչուկներ, վարակիչ, կենսատու ավյունով տոգորված պատանիներ ու աղջնակներ... Եվ ճշմարտացի են ձեր հյուրերի մատյանում գրառված վերոնշյալ տողերը: Նմանապես եւ բոլոր այլ հիացական խոսքերը, որ աշխարհի տարբեր երկրներից ամենատարբեր տարիքի եւ զբաղմունքի տեր այցելուները ստացորով զգացմունքներով հղել են ձեզ, ականատես լինելով ձեր հրաշք ստեղծագործությանը...

Բոլոր ականատեսների սրտի այս զեղումներն արդարացիորեն ունեն նաեւ մեկ այլ հասցեատեր: Նա Գեղագիտության ազգային կենտրոնի, Հայաստանի մանկական ստեղծագործության թանգարանի, Հայաստանի ժամանակակից արվեստի թանգարանի տնօրեն, արվեստաբան Հենրիկ Իշիթյանն է: Չի նրա ջանքերով 1984-ին հիմնադրվեց Գեղագիտության դաստիարակության հանրապետական կենտրոնի Կիրովականի մասնաճյուղը, որն այժմ վերանվանվել է Գեղագիտության ազգային կենտրոնի Վանաձորի մասնաճյուղ:

Ստեղծված օրից ցայսօր ոչ սահեղ երկրաշարժը, ոչ երկրի տնտեսական ճգնաժամը, ոչ մշակութաանդ քարքարուհարաբերությունները, ոչ բազմազան այլանուն դժվարություններն ի վիճակի չեղան սասանելու, ընդհատելու հիշյալ կենտրոնի ստեղծագործական աշխատանքը: «Մեզ մոտ գործում են կերպարվեստի, խեցեգործության, կարպետի, գոբելենի, գորգի, ասեղնագործության, փայտի փորագրության, տիկնիկագործության, թատերական, ասմունքի, ժամանակակից եւ պարահանդեսային պարերի, անգլերեն լեզվի խմբեր, որտեղ տարեկան գեղագիտական դաստիարակություն են ստանում շուրջ 250 սաներ: Դասավանդում են հմուտ մանկավարժներ, կազմակերպվում են բազում ուշագրավ միջոցառումներ, երեխաների աշխատանքները հավաքվում են, պահպանվում, ցուցադրվում եւ արժեքավորվում: Նրանց ցուցահանդեսների աշխարհագրական քարտեզն ընդգրկում է Վանաձոր, Երեւան, Ժնեւ, Օսլո, Փարիզ, Լիոն, Բորդո, Մինդեն եւ այլ ու այլ անուններ», այս ամենը պատմում է ինձ կենտրոնի տնօրեն Կարինե Գլոյանը:

Ես լսում եմ նրան՝ աչք չթարթելով երեխաների թանգարանային ցուցանմուշներից: Թվում է՝ այլ աշխարհ եմ ընկել, որ ոչ մի կապ ու զուգահեռ չունի մեր իրականության հետ. այնքա՞ն խանդավառ եւ նրբին են գեղանկարների երփներանգ ծածանումները, ասեղնագործության մանրապատկերները, գոբելենների ազգային կոլորիտով հագեցած զարդանախշերը... Թվում է, աշխարհի ամբողջ լույսն ու բարությունը, մաքրությունը եւ մեղմաբարությունը մակարդակվել-իջեւանել են այս գողտրիկ, գեղատեսիլ, մեր տեսած-վայելած եվրոպական մակարդակի սրահներում:

Հյուրերի մատյանում արված բոլոր խոսքերն էլ ճշմարտացի են: Եվ եթե մեջբերեմ առանց զատման, ապա կստացվի մի գեղեցիկ բալլադ հայ երեխաների մասին: Նրանց, ովքեր մեր վաղվա օրն են եւ մեր երկրի տերը: Հասկանալի է, սակայն բոլորն այստեղ զետեղել չեմ կարող (հոդվածի ծավալն է խանգարում): Ուստի ավարտում եմ «բալլադի» վերջին տողով. «Մարդկային հավատի հրաշք, մարդկային հույսի հրաշք, մարդկային անբասիրության հրաշք, ահա թե ինչ է Գեղագիտության ազգային կենտրոնը»:

Մենք միշտ ձեզ հետ ենք, իսկ դուք այցի եկեք մեկ-մեկ

Հակոբ Գյուրջյան, Մինաս, Քոչար, Ռուբեն Ադալյան, Արմինե Կալենց, Լավինիա Բաժբեուկ-Մելիքյան, Էլիբեկյաններ...

Հայ քանդակի՝ ու գեղանկարչության անվանի վարպետների աշխատանքներն ապրում են այստեղ լռակյաց կյանքով՝ մատնված սեփական ինքնասույզ մտորումներին: Դրանք խախտվում են անշուշտ, սակայն ոչ այնքան հաճախ եւ տեւականորեն, որքան որ ցանկալի եւ անընկալելի կլիներ: Որովհետեւ... Արժե՞ արդյոք կրկին ու կրկին թվարկել «ընդհանուր հասարակական-սոցիալական-տնտեսական» պատճառները...

Վանաձորի կերպարվեստի թանգարանի տնօրեն, ՀՀ վաստակավոր նկարիչ Վիլեն Գաբազյանի պահի բացակայությամբ զրուցում եմ էքսկուրսավար Արեգնազ Սահակյանի հետ: «Մեզ մոտ միջոցառումներ են լինում, երբեմն «ընբռնումով»՝ սրահներն անվճար տրամադրում ենք տարբեր կազմակերպություններին, կազմակերպում ենք նաեւ տեղի եւ Երեւանի նկարիչների աշխատանքների ցուցահանդեսներ, համագործակցում ենք երիտասարդ նկարիչների միության հետ: Շուրջ 2000 ֆոնդային նմուշներից ցուցադրված են 150-ը: Բնականաբար ցուցանմուշները պարբերաբար փոփոխվում են, բայց պահեստավորված աշխատանքների մի մասը նորոգման է կարոտ, ինչի համար չկան ոչ գումար եւ ոչ մասնագետներ (իսկ եթե այդպիսիք գտնվեն, գործին խոչընդոտելու է նրանց վճարման նյութական հարցը): Հավաքածուն ամբողջությամբ՝ նոր ստեղծագործություններով համալրման է կարոտ: Կան բազում չլուծված ֆինանսական խնդիրներ: Մի խոսքով, մեր այսօրվա իրականության պատկերն է», ամփոփում է նա իր խոսքը:

Տեսնում եմ, որ պատկերասրահի 3 հարկերի լայնարձակ սրահներում զետեղված են նաեւ վանաձորցի ճանաչված արվեստագետների գործերը. Գեորգի Թովմասյանի, Արամ Նազարյանի, Կարլոս Աբովյանի, Փափագ Ալոյանի, Մարիամ Ամիրխանյանի, Սուսաննա Մկրտչյանի...

...Կանգնած եմ միայնակ, անսովորությունից փոքր-ինչ շփոթված... որսում եմ Քոչարի ինքնանկարից (վաղ շրջան) նայող հարցական հայացքը, որն ասես խոսում է ամենքի անունից. մենք միշտ այստեղ, ձեզ հետ ենք, միայն դուք այցի եկեք մեզ...

Պետությո՛ւնը պիտի հոգա մարդու հոգեւոր դաստիարակությունը, այլ ոչ գյուղի համայնքը

Մարզպետարանի մշակույթի, երիտասարդության եւ սպորտի բաժնի վարիչի պաշտոնակատար Միհր Մելիքյանը ներկայացրեց Լոռու մարզի մշակութային առկա նկարագիրը. 29 գեղարվեստի եւ երաժշտական դպրոցներից 9-ը գործում է տնակներում, 20-ը խիստ վերանորոգման կարիք ունի, 116-ը՝ մշակութային տներից, աչքեւ այս տարվա սեպտեմբերի 1-ը շահագործման կհանձնվի 17 դպրոց: Այսպիսով, մարզում կվերանան տնակային պայմաններում գործող դպրոցները: Ինչ վերաբերում է մշակույթին, ապա պատկերը հետեւյալն է. ինչպես նշեց Ա. Քոչարյանը, Լոռու մարզի մշակույթի բնագավառին բնորոշ են ընդհանրապես աղետի գոտու, ինչպես եւ հանրապետության ներկայիս իրավիճակի բոլոր առանձնահատկությունները: Երկրաշարժի հետեւանքով մշակութային շինությունների շուրջ 80 տոկոսն ավերված կամ կիսաքանդ վիճակում է: Վերջին 13 տարում մշակութային ոչ մի հիմնարկ գույքի համալրում չի ստացել: Գրադարանների մեծ մասը կոմբներից, կենտրոններից, հարաբեր պայմաններում գտնվող 45-ից 42-ը, նույնպես վերաշինության է ենթակա, 147 գրադարաններից շենքային պայմաններում է 52-ը, ծանր վիճակում է Մ. Թավրիզյանի անվան երաժշտական ուսումնարանը. փակվել է փողային նվագարանների դասարանը, ուսման վարձը վճարողների թիվն արագորեն նվազում է, պետպատվերները հիչ են, չնչին աշխատավարձը չի տրվում ժամանակին, շենքային եւ ֆինանսական վատ պայմաններում է «Հորովել» հայտնի համույթը: Սակայն եւ. սկսվել են Վանաձորի մշակույթի պալատի շենքի վերականգնման աշխատանքները, գործում են Վանաձորի քաղաքապետարանի կամերային երգչախումբը, Ալավերդու երաժշտական դպրոցը, ժող. թատրոնը, «Լազուր» ժողգործիքների անսամբլը, երկրաշարժից հետո վերականգնվել են Վանաձորի թիվ 3 մշակույթի տունը, գեղարվեստական դպրոցը, Սպիտակի մշակույթի ակումբը, երաժշտական դպրոցը, կազմակերպվում են մշակութային եւ քրիստոնեության 1700-ամյակին նվիրված տարբեր միջոցառումներ:

Կանոնավոր գործում է Ստեփան Զորյանի տուն-թանգարանը (տնօրեն՝ Վազգեն Վանասուր): Ինչպես նշեց Միհր Մելիքյանը, միջոցառումներն իրագործվում են մարզի նյութական կարողություններով եւ հիմնականում մարզպետի հովանավորությամբ, որն ընդհանրապես մեծ տեղ է տալիս մշակույթին:

Ընդհանրապես հարկ է նշել, որ այցելածս բոլոր հիմնարկներում գնահատանքով էին արտահայտվում թե Լոռու մարզպետի, թե մարզպետարանի մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի բաժնի վարիչ Ռոբերտ Ֆարմանյանի գործունեության մասին՝ ամենուրեք շեշտելով, որ վերջիններս ծանր «ժառանգություն» ստանալով՝ ճգնում են հնարավորինն անել մարզի նաեւ մշակույթի բնագավառում:

Զրույցի ընթացքում Միհր Մելիքյանը տեղին եւ իրավացի դիտարկում արեց. «1996-ից երաժշտական դպրոցները տրվեցին տեղական համայնքների ենթակայությանը: Սխալ քայլ էր. տեղական բյուջեն չի կարող պահել այդ դպրոցները: Նրանք պետք է գտնվեն նախարարության, պետության հովանու տակ: Պետությունը պիտի հոգա մարդու հոգեւոր, մշակութային դաստիարակությունը, այլ ոչ թե գյուղի համայնքը»:

«Տնտեսության զարգացումը արտագաղթը կասեցնելու ամենից արդյունավետ միջոցն է»

Վանաձոր այցելությանս օրերին Լոռու մարզպետ Հենրիկ Քոչինյանը գործուղման մեջ էր: Հետաքրքրող շատ հարցերի սպառիչ պատասխան տվեց փոխմարզպետ Արամ Քոչարյանը: Մեծապես կարեւորելով դպրոցաշինության խնդիրները, նա նշեց, որ մինչեւ այս տարվա սեպտեմբերի 1-ը շահագործման կհանձնվի 17 դպրոց: Այսպիսով, մարզում կվերանան տնակային պայմաններում գործող դպրոցները: Ինչ վերաբերում է մշակույթին, ապա պատկերը հետեւյալն է. ինչպես նշեց Ա. Քոչարյանը, Լոռու մարզի մշակույթի բնագավառին բնորոշ են ընդհանրապես աղետի գոտու, ինչպես եւ հանրապետության ներկայիս իրավիճակի բոլոր առանձնահատկությունները: Երկրաշարժի հետեւանքով մշակութային շինությունների շուրջ 80 տոկոսն ավերված կամ կիսաքանդ վիճակում է: Վերջին 13 տարում մշակութային ոչ մի հիմնարկ գույքի համալրում չի ստացել: Գրադարանների մեծ մասը զրկված է թերթեր բաժանորդագրվելու նյութական հնարավորությունից: Ձմռանը ոչ մի հիմնարկություն չի ջեռուցվում: Ոլորտի աշխատողների աշխատավարձը չնչին է եւ հաճախ տրվում է ամիսների ուշացումով: Վիճակից գոնե որոշ չափով դուրս գալու նպատակով մարզպետի գլխավորությամբ մշակվել է մարզի բոլոր բնագավառներն ընդգրկող «Լոռու մարզի 2001-2005 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր», որը կես առ կես ներկայացնում է հաղթահարման հնարավոր հեռանկարային քայլերը: Ծրագիրն այդ տվար հատոր է: Մանրակրկիտ ծանոթանալով բովանդակությանը, որն անշերկբայորեն մեծարժեք արժանի է խրախուսանքի, ուզում եմ թույլ տալ ինձ անելու հետեւյալ դիտարկումը: Խիստ մասնագիտականորեն եւ ստացավորեն կատարված այս աշխատանքի իրագործման համար (որ բնագավառին էլ պատկանի) նախ եւ առաջ անհրաժեշտ է հիմնավոր բազա՝ պատշաճ ֆինանսական միջոցներ: Զորեղ գործոն, առանց որի ցանկացած մտահղացում, ծրագիր կմնան լոկ գրառում: Պարզ է, որ նման միջոցների ձեռքբերումը պետության առաջնահերթ եւ բարդագույն հիմնախնդիրներից մեկն է:

Մտահոգությամբ անդրադարձավ Արամ Քոչարյանը նաեւ մարզում օրըստօրե աճող արտագաղթին:

Սույն թվականի մայիսի 29-ին Լոռու մարզ ժամանած հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանն ասաց. «Տնտեսության զարգացումը արտագաղթը կասեցնելու ամենից արդյունավետ միջոցն է»:

Ամենայն համոզվածությամբ ավելացնենք. տնտեսության զարգացման հիմքի վրա նաեւ մշակույթի զարգացումն է արտագաղթը կասեցնելու միջոցներից մեկը: Երկրի ներկայիս վիճակի կենսականորեն հրատապ լուծում պահանջող համախնդիրներ, որոնք նախ եւ առաջ ակնկալում են պետական մոտեցում: Սա է ներկայիս Վանաձորի (եւ ամբողջ Լոռու մարզի) մոտալուտ հիմնական սպասելիքը:

Վերոհիշյալ համալիր ծրագրի նախաբանում կարդում եմ. «Արտագաղթը, հիասթափությունն ու վստահության ասիճանական կորուստն ապագայի նկատմամբ լրջորեն սպառնում են մարզի սոցիալ-տնտեսական (ավելացնենք նաեւ՝ հասարակական, բարոյական) իրավիճակին»:

Թող հավերժի լույսը հավատի

...Աչքիս առջեւ կենդանացանում՝ առանձ երեխաների հրաշք աշխատանքները, որոնց ամեն մի գույն ու գիծ, ամեն մի նախշ ու պատկեր բուրվառում են մանկական իմաստնությամբ: Մեզ՝ մեծերիս հոգու խորքից ուղղված հայացք է դա, որ լեցուն է հավատով եւ վստահությամբ իրենց վաղվա օրվա նկատմամբ: Եվ թող լինի այնպես, որ մեր իսկ ձեռքերով հանկարծ չխամրի նրանց հավատի լույսը:

Գեղագիտության կենտրոնի սաների աշխատանքներ:

Օրվա հետքերով

ՎԱՆԱՁՈՐ

Ավտովթարից տուժել են 6 մեծահասակ եւ 5 երեխա

Հուլիսի 22-ին, ժամը 20-21-ի սահմաններում, Վանաձոր-Ստեփանավան ճանապարհի 5-րդ կիլոմետրում, Բազում գյուղից դուրս (թունելին չհասած) վթարի է ենթարկվել Սամվել Աղամալյանին պատկանող «Վազ 2106» մակնիշի 36 ԼԼ 829 պետհամարանիշի ավտոմեքենան, որի մեջ եղել է 11 մարդ (ազգական-հարազատներ)՝ 6 մեծահասակ եւ 5 երեխա: Տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներով նրանք տեղափոխվել են Վանաձորի թիվ 1 եւ «Նարեկ» (թիվ 1 մանկական) հիվանդանոցներ:

Ինչպես տեղեկացանք՝ մեծահասակներից 3-ը վնասվածքաբանական (տրավմատոլոգիայի) եւ 3-ը վերակենդանացման բաժանմունքներում են (վերջիններիս վիճակը ծանր է): Երեխաներից 2-ը «Նարեկի» վնասվածքաբանական բաժանմունքում են, 3-ը՝ վերակենդանացման (նրանցից 2-ի վիճակը շատ ծանր է):

Մեր մարզում գերբեռնված մեքենա վարելու հետեւանքով նման վթարները եզակի չեն: Եվ այս ցավալի պատահարն արդյոք դաս կլինի՞, որ գոնե այսուհետ վարորդները պատասխանատվություն զգան՝ եթե ոչ իրենց, ապա ուրիշների (առավել եւս՝ հարազատների) կյանքի համար...

ՄԱՆՎԵԼ ՄԻԿՈՅԱՆ

Վթարի է ենթարկվել Երեւանից Մոսկվա մեկնած ավտոբուսը

ԵՐԵՎԱՆ, 24 ՀՈՒԼԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հուլիսի 24-ի առավոտյան Գուդաուրի վրացական առողջարանային քաղաքում վթարի է ենթարկվել Երեւան-Մոսկվա ավտոբուսը: Հինգ ուղեւոր տեղափոխվել են հիվանդանոց: 15-ը թեթեւ վնասվածք են ստացել:

Ականատեսների վկայությամբ, վարորդը դուրս է եկել ստուգելու տաքացած շարժիչը եւ մոռացել սեղմել արգելակը, ինչի հետեւանքով ավտոբուսը 36 ուղեւորներով հետ է շարժվել ու ընկել խորխորատը:

«Մերսեդես» մակնիշի ավտոբուսը, որը պատկանում է Թբիլիսիում գրանցված «Պետրոս-94» ընկերությանը, Երեւանից դուրս է եկել հուլիսի 22-ին:

Ավտոբուսը, ըստ «Կովկասպրես» գործակալության, լիովին այրվել է: Ներկայումս Վրաստանի ճնշական մարմինները ճնություն են անցկացնում: Որոշ վկաներ պնդում են, որ վարորդը ոգելից խմիչք էր օգտագործել:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Ադրբեջանցի լրագրողները կայցելեն Ղարաբաղ

ԲԱԿՈՒ, 24 ՀՈՒԼԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Բաքվի «Գյանջլիք» միջազգային տուրիստական կենտրոնում հուլիսի 20-22 անցկացվեց հակամարտող կողմերի միջեւ հեռուստաերկխոսության տեխնոլոգիաներին նվիրված միջազգային սեմինար, որին մասնակցում էին լրագրողներ Հայաստանից ու Վրաստանից, Ռուսաստանից եւ այլ երկրներից:

Մասնակիցների ուշադրության կենտրոնում էր Բաքու-Երեւան հեռուստակամուրջը, որի 24 հաղորդումների ժամանակ երկու երկրների ներկայացուցիչները հնարավորություն են ունեցել միմյանց հայտնել իրենց տեսակետները ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ: Ի դեմ, սեմինարի ընթացքում արձանագրվեց, որ առաջին 12 հաղորդումների ժամանակ հաղորդավարները երկխոսությանը մասնակցել են իրենց սեփական մեկնաբանություններով, ինչը երբեմն լարված մթնոլորտի պատճառ է դարձել, իսկ վերջին 12 հեռուստակամուրջների ժամանակ նրանք գտնվել են պասսիվ դերում՝ երկխոսությանը տալով մեղմ բնույթ:

Սեմինարում այդ հեռուստակամուրջները, ինչպես նաեւ անդրկովկասյան այլ ժողովուրդների ներկայացուցիչների հետ կազմակերպված տարբեր երկխոսությունների տեսագրությունները դարձան քննարկման լայն առարկա: Մասնակիցները խոսեցին հեռուստադիտողների վրա դրանց թողած ազդեցության մասին, վեր հանեցին առկա մասնագիտական թերացումները, փորձեցին գտնել հեռուստակամուրջների կազմակերպման նոր ուղիներ:

Քննարկեցին նաեւ Հայաստանի եւ Ադրբեջանի երիտասարդության միջեւ երկխոսության կազմակերպման հարցեր՝ համատեղ ռադիոհաղորդումների միջոցով: Պայմանավորվածություն ձեռք բերվեց ստեղծել Անդրկովկասում առկա հակամարտությունները լուսաբանող ընդհանուր ղեկավար կենտրոն, որը կկոորդինացնի տարածաշրջանում որոշ հեռուստահաղորդումների, տեսանյութերի եւ հարցազրույցների նկարահանման եւ ցուցադրման աշխատանքները:

Ասենք, որ հայկական պատվիրակությանը հնարավորություն տրվեց մի քանի ժամով շրջագայել Բաքվում, լինել քաղաքի տեսարժան վայրերում եւ ներկա լինել Ադրբեջանի ժուռնալիստների օրվան նվիրված միջոցառմանը:

Հուլիսի 26-ին սպասվում է ադրբեջանցի լրագրողների պատվիրակության այցը Երեւան, որտեղից հաջորդ օրը Երեւանի մամուլի ակումբի ներկայացուցիչների հետ նրանք կմեկնեն Լեռնային Ղարաբաղ:

Սկանդալ Վարշավայի թուրքական դեսպանատանը

ՍՏԱՄԲՈՒԼ, 24 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Թուրքական մամուլը տեղեկացնում է Վարշավայի թուրքական դեսպանատանը տեղ գտած սկանդալի մասին: Դեսպանատան աշխատողներից մեկը բռնի դեսպանատան տարածք է բերել Կատարիցինի Բ. անունով մի ծախու կնոջ եւ հարձակում է գործել նրա վրա: Կնոջը հաջողվել է իր վրա հրավիրել ոստիկանության ուշադրությունը: Ավելի ուշ ոստիկանությունը մուտք չի գործել դեսպանատան տարածք՝ ելնելով դիվանագիտական ներկայացուցչությունների անձեռնմխելիության սկզբունքից:

Միջադեպը լուսաբանվել է լեհական մամուլում, ինչից հետո երկրի ֆեմինիստական կազմակերպությունները՝ «Մարտի 8» կանանց դիմադրության շարժում միությունը, «Կանանց լրատվական միությունը» եւ ուրիշներ շրջափակել են թուրքական դեսպանատան մուտքը: Լեհաստանի ԱԳ նախարարությունը հայտարարել է, որ ոստիկանության տեղեկագիրը ուսումնասիրելուց հետո կձեռնարկվեն անհրաժեշտ միջոցառումներ:

Իրանում գտնվել է մոլագարի 19-րդ զոհը

ԹԵՀՐԱՆ, 24 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Իրանական լրատվամիջոցների հաղորդմամբ, Մեշհեդ քաղաքում՝ երկրի հյուսիս-արեւելքում հայտնաբերվել է սերիական մարդասպանի տասնիններորդ զոհը: Ինչպես նախորդ զոհերը, նա եւս խեղդամահ էր արվել փարաջայով: Մոլագարի բոլոր զոհերը 25-50 տարեկան կանայք են՝ կապված պոռնկության եւ թմրադեղերի տարածման հետ: Առկա տեղեկատվության վերստուգումից հետո իրանական ոստիկանությունն արդեն չի բացառում այն հնարավորությունը, որ գործում է միայնակ մոլագար, այլ ոչ թե կազմակերպված խումբ, հաղորդում է «Ռոյթեր» գործակալությունը:

Մակեդոնիան կրկին պատերազմի եզրին է

ՍԿՈՊԻԵ, 24 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Սկոպիեում Մակեդոնիայի նախագահ Բորիս Տրայկովսկին հուլիսի 23-ի ուշ երեկոյան հանդիպել է երկրի բարձրագույն զինվորական եւ քաղաքական ղեկավարության, ինչպես նաեւ ՆԱՏՕ-ի, Եվրամիության եւ ԱՄՆ-ի ներկայացուցիչներ Պիտեր Ֆեյթի, Ֆրանսուա Լեոտարի եւ Ջեյմս Պարդյուի հետ: Հարցերը գումարված խորհրդակցության նպատակն էր քննարկել իրավիճակը, որ ստեղծվել է Տետովո քաղաքի եւ նրա արվարձանների դեմ ալբանական ահաբեկիչների հարձակումից հետո: Պաշտպանության նախարար Վլադո Բուչկովսկին հանդիպման նախօրյակին նշել է, որ ալբանական ծայրահեղականները հուլիսի 5-ից, երբ հայտարարվեց հրադադարի մասին համաձայնությունը, 276 անգամ հարձակվել են անվտանգության կառավարական ուժերի դեմ: Նա նախազգուշացրել է, որ բանակը կսկսի հարձակումը, եթե ահաբեկիչները դուրս չգան Տետովոյից եւ մերձակա գյուղերից: Ըստ որում նա նկատել է, որ ՆԱՏՕ-ն, որպես հաշտության համաձայնության երաշխավոր, պետք է միջոցներ ձեռնարկի ծայրահեղականների դուրսբերման ուղղությամբ: Այս մասին հաղորդում է «Նովոստի» գործակալությունը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՋԻՆԻՇՅԱՆ
հիշատակի հիմնադրամի հովանավորությամբ կենդանաբանական այգու մուտքը բոլոր այցելուների համար օգոստոսի 1-ին, 2-ին եւ 3-ին լինելու է անվճար:

Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրությունն ընթերցողներին առաջարկում է.

1. Հայկական հարց
2. Հայկական համառոտ հանրագիտարան (քառահատորյակ)- 1-3-րդ հատորներ
3. Տնային տնտեսության հանրագիտարան
4. «Ոսկեփորիկ» մանկական հանրագիտարան- 1-3-րդ հատորներ
5. Հանրամատչելի բժշկական հանրագիտարան
6. Հայ եկեղեցի. նվիրապետական աթոռներ, թեմեր

Հասցեն՝ 375001, Երեւան, Թումանյան 17
Հեռ.՝ 52-43-41, 52-13-81, 52-13-50 Fax՝ 52-06-67
E-mail՝ encyclop@sci.am

YEREVAN-PARIS-LYON
SABERATOURS-SEVAN
ՍԱԲԵՐԱՏՈՒՐ-ՍԵՎԱՆ
ԵՐԵՎԱՆ-ՓԱՐԻԶ-ԼԻՈՆ

Ավիատոմսեր եւ տուրիզմ

«Սաբերատուր-Սեւան»
ճամփորդական գործակալությունն առաջարկում է.

- Ավիատոմսեր Երեւանից ուղիղ չվերթերով տրանզիտ քաղաքներով ցանկացած ուղղությամբ եւ ընկերությամբ:

ARMENIAN AIRLINES swissair KLM BRITISH AIRWAYS АЭРОФЛОТ

Փարիզի օդանավակայանում
Ձեզ կդիմավորի մեր գրասենյակի ներկայացուցիչը եւ կհոգա Ձեր բոլոր հոգսերը՝

- Գնացքի տոմսեր Եվրոպայում
- Հյուրանոցների ամրագրում Հայաստանում եւ արտասահմանում
- Բժշկական ապահովագրություն

375010, ք. Երեւան, Վարդանանց 10
Հեռ. (3741) 52 54 48, 52 85 48, ֆաքս (3741) 56 40 30
E-mail: sabera@arminco.com

CALIFORNIA PIZZA

Ճաշատեսակներ
պիցցաներ
սենդվիչներ
աղցաններ
Բարձր որակ, հաճելի մթնոլորտ
Վայելեք որակյալ լցնովի գարեջուր
Այցելեք Աբովյան 21 եւ կհամոզվեք
Առաքման համար՝
☎ 543-100, 586-395

ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ (ԲՀԻՕՀՀՄ)

ԲՀԻՕՀՀՄ-ը եւ «Մշակութային կապեր» ցանցային ծրագիրը հայտարարում են Հայաստանում միջազգային փառատոներ, վարպետության դասախոսություններ (մաստերկլասներ) եւ այլ մշակութային ծրագրեր կազմակերպելու մրցույթ: Նախապատվությունը տրվում է ժամանակակից թատրոնի, պարի, երաժշտության, կինոյի, գեղարվեստի, կիրառական, ֆոտո, վիզուալ եւ արվեստի այլ ձեւերին, ինչպես նաեւ ժամանակակից մեթոդներով ներկայացվող ավանդական արվեստների ծրագրերին:

Ծրագրերն ընդունվում են ԲՀԻՕՀՀՄ-ի գրասենյակում մինչեւ 2001 թ. սեպտեմբերի 6-ը: Տեղեկացնում ենք նաեւ, որ ԲՀԻՕՀ հայկական մասնաճյուղն արձակուրդի մեջ է գտնվելու օգոստոսի 1-14-ը: Մրցույթի նկարագրությունը եւ դիմումի ձեւն անհրաժեշտ է ստանալ ԲՀԻՕՀՀՄ-ի գրասենյակում, հետեւյալ հասցեով՝
Երեւան 10, Պուշկինի 1, բն. 2, հեռ. 542-119, 541-719, 543-901
e-mail: armine@osi.am, ինչպես նաեւ www.osi.am

ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ (ԲՀԻՕՀՀՄ)

ԲՀԻՕՀՀՄ-ը եւ «Մշակութային կապեր» ցանցային ծրագիրը հայտարարում են մրցույթ՝ «Կովկասի մշակույթի եւ արվեստի մենեջերների ցանց 2001» կոնֆերանսին մասնակցելու համար, որը տեղի կունենա Թբիլիսիում ս. թ. սեպտեմբերի 1-5-ը: Փառատոնի նպատակը Կովկասում մշակութային կապերի զարգացման խթանումն է:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել ինքնակենսագրություն (CV), տվյալ բնագավառում գործունեության նկարագրություն եւ փառատոնին մասնակցելու անհրաժեշտության հիմնավորում: Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ ս. թ. օգոստոսի 17-ը: Հայտնում ենք նաեւ, որ ԲՀԻՕՀՀՄ-ի գրասենյակը ս. թ. օգոստոսի 1-14-ը փակ է լինելու արձակուրդի պատճառով: Հավելյալ տեղեկությունների համար դրեք հետեւյալ հասցեով՝
Երեւան 10, Պուշկինի 1, բն. 2, հեռ. 542119, 541719, 543901
e-mail: armine@osi.am, ինչպես նաեւ www.osi.am

@rminco
Global telecommunications

ՆՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
- Ինֆորմացիայի վերականգնում
- Սարքավորումների վերանորոգում

ՆՈՐ ԳՆԵՐ, ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԻՆՏԵՐՆԵՏ քարտի օգտագործում 20% զաղջ գներով

Գիշերայինը՝	ամսական	20$
Շուրջօրյան՝	ամսական	50$
էլ.փոստը՝	ամսական	10$

Հեռ.՝ 52-43-51, 52-63-26
E-mail: support@arminco.com
WEB: http://www.arminco.com

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրած է տպագրության՝ 24. 07. 2001 Գինը՝ 100 դրամ